№ 115 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 30

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 30 № 115

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

Կամենալով օգնութեան հասնել այն տանտէրերին, որ դժուարանում են այս կամ այն պատճառով իրանք կատարել վարչութեան պահանջած (պարտ. որոշմ. հիման վրա) աշխատանքները, այն է՝ ամեն տեսակի մայթերի կանօնաւորելը, նրանց վրայի ջրփոսերը ոչնչացնելը, ցանկ շինելը և այլն, առաջարկում է տանտէրերին այդ աշխատանքների կատարելը յանձնարարել վարչութեան՝ իրանց հաշուին, քանի որ վարչութիւնը հնարաւորութիւն ունի աշխատանքները արագ ու էժան կատարել։ Սրա հետ միասին վարչութիւնը դարձեալ յիշեցնում է, որ թէև շատ տանտէրեր սկսել են ցանկերն ու մայթերը կանօնաւորել, բայց սակայն կան նաև ուրիշ շատ մարդիկ, որ դեռ չեն ձեռնարկել այդ աշխատանքներին, թէև դրա համար կատարեալ հնարաւորութիւն ունեն։ Ի նկատի ունենալով, որ հիմա ամենայարմար ժամանակն է այսպիսի աշխատանքներ կատարելու համար, վարչութիւնս, ձեռնարկելով արձանագրութիւնները անյողդողդ կերպով կազմելուն, մի անգամ էլ խնդրում է տանտէրերին ինքնակամ ի կատար ածել իրանց պարտաւորութիւնները քաղաքի առաջ, մանաւանդ, որ դա ուղղակի համապատասխանում է իրանց՝ տանտէրերի և բոլոր ազգաբնակութեան շահերին։ Այս հարցի մասին ամեն տեղեկութիւն կարելի է ստանալ վարչութեան շինարար. բաժանմունքում ամեն օր, ցերեկվայ ժամի 10-ից մինչև 2-ը։ 2—4

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ,

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

պրոֆեսօր **Ն. ՄԱՌՌ**

կը կարդայ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Անիի աւերակների եւ հին քաղաքատեղի պեղումների մասին»

հետեւեալ ծրագրով

I Անի քաղաք.—Անի քաղաքի պատմութեան գրական աղբիւրների մասին։—Քաղաքի հիմնադիրները և Անին այցելած եւրօպական ճանապարհորդները։—Գրաւոր պատմական դպրոց ազգային (հայ) աւանդական հայեցակէտով և Հայաստանի պատմական կեանքի իրական հոսանքները։—Անիի պատմութեան սահմանները։—Անիի պատմագիրների մասին։

II. Հայագիտութիւն և գիտական արևելագիտութիւն։—Թէ ինչ միջավայրում ծագեց միտք Հայաստանում պեղումներ անելու մասին։—Սիստեմական պեղումների սկիզբը Անիում։—Առաջին պեղումներ (1892 թ.) նկարազարդ տոհմային եկեղեցի ս. Գրիգորի XII—XIII դար։—Երկրորդ պեղումներ (1893 թ.), երկու եկեղեցիներ, մէկը Աստուածածնի՝ տիկին Հռոսմի շինած (1217 թ.). միւսը Աստուածածնի, Խամրադենց տոհմի, Թագաւորների ժամանակից, և Անիի հին քաղաքային պարիսպը, որ շինել է Աշոտ Բագրատունին։—Անիի հնութիւնների թանգարանը։—Երրորդ պեղումներ (1904 թ.). բանւոր ազգաբնակութեան տները։—Չորրորդ պեղումներ (1905 թ.). ս. Գրիգորի կլոր խաչաձև սիւնազարդ կենտրօնով տաճարը, շինութիւն (1001 թ.) Գագիկ Թագաւոր Բագրատունու, կապված Յով. Ստրժիգովսկու այն թէօրիայի հետ՝ թէ ինչ նշանակութիւն ունի հայկական ճարտարապետութիւնը քրիստոնէական արուեստի պատմութեան համար։

III. Այն շինութեան մասին, որի նախագաւիթը իր մանուածոյ մօզաիք ճակատով պեղված է Գագիկի ս. Գրիգոր տաճարի մօտ։—Պեղումների ժամանակ բացված աղքատ տների և նրանց արդուզարդի մի քանի առարկաների մասին։—Այրերի թաղը և մի դէպք հայ-վրացական յարաբերութիւնների պատմութիւնից։—Անիի հայոց թագաւորութեան անկման ներքին պատճառներից մէկը 1043 թ.—Պեղումներից հանած մի քանի առարկաների մասին։—Հեթանոսական հնութիւններ Անիում։—Ս. Գրիգոր քաղկեդոնական եկեղեցու որմնանկարները։—Անիի Աստուածածին մայր եկեղեցու ժամանակը։—Անեցիների կուլտուրական առաջադիմութիւնը հայ Բագրատունիների անկումից յետ՝ կապված այն հարցի հետ, թէ ինչ մասնակցութիւն են ունեցել զանազան ազգութիւններ այդ առաջադիմութեան մէջ։—Անիում պեղումների գործը կազմակերպելու և շարունակելու անհրաժեշտութեան մասին։

Սկիզբն է ճիշտ 8 ժամի երեկոյեան։

Մուտքի գինը I կարգ 1 րուբլի II կարգ 75 կ. 3, 4, 5 և 6 րորդ կարգեր 50 կոպէկ 7, 8, և 9 երորդ կարգերը 30 կ. իսկ մնացածը 20 կոպէկ։ 1—2

ԱՐՁԱՆԱԳՈՐԾ Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ փակումը և վիճակախաղը յետաձգվում են մինչև յունիսի 4-ը։

Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան $7^{1}/_{2}$ ժամը։ Մուտքի վճարը մեծերին 20 կոպէկ, երեխաներին և ուսանողներին 10 կոպէկ կատալօգով։ Այն անձինք, որոնք գնել են վիճակախաղի տոմսակները կարող են մուտք չը վճարել։ 1—2

Քիմիկօ-բակտերիօլօգիական ինստիտուտ
ԲԺ. Ֆ. Մ. ԲԼԻՒՄԵՆՏԱԼԻ
Մոսկվայում

ՇԻՃՈՒԿՆԵՐ (сыворотки) սկարլատինայի (Մօզերի մեթօդով), դիֆտերիտի, բծմառիդի դէմ (Menzer'y-ի մեթօդով) դիզենտերիյնայա, պուէրպերալնայա, ստրեպտօկօկկովայա (պոլիվալենտնայա) ստաֆիլօկօկկովայա և բազեդօվայա (Մեբիուսի մեթօդով) միշտ գտնվում են

պրովիզոր
Ա. Ս. ԿԼԵԲԱՆՍԿՈՒ
ՔԻՄԻԿՕ-ԲԱԿՏԵՐԻՕԼՕԳԻԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՈՒՄ

Ընդունվում են մէզի, մաղձի հետազօտութիւններ. Իշխ. Վօրօնցօվի արձանի մօտ, հեռախօս № 389։

(կ. առ) 5—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է կազմակերպել. Վերջին տեղեկութիւններ. Երևանի դէպքը. Մամուլ. Քօչը Զանգեզուրում. Արէշցիների արդի վիճակը. Ո՞ւր է ելքը. Մոռացված անկիւններ. Հայլեզուի ամբիոններ. Մէջլիսների ժողովում. Թատրօն և երաժշտութիւն. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Աշխատավորական շարժում Թիւրքական կանանց մէջ. Արտաքին լուրեր. Պետական Դումա. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԷՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

I

Անդրկովկասի պատգամաւորները արդէն գնում են Պետական Դումա։

Նրանք, առհասարակ, շատ չեն թւով՝ համեմատած ամբողջ Դումայի պատգամաւորների հետ։ Եւ նրանց մէջ էլ ամենափոքրը տեղն է բռնում հայ պատգամաւորական կազմը։

Սակայն որքան էլ քիչ թւով լինեն կովկասցիները, այնուամենայնիւ նրանք մեծ դեր ունեն կատարելու շատ խնդիրներում՝ թէ իբրև Պետական Դումայի անդամներ, թէ իբրև կովկասցիներ և թէ իբրև ծայրերկիրներից մէկի ներկայացուցիչներ։

Ընդհանուր խնդիրներում կովկասցիները, յարելով Պետական Դումայի այս կամ այն գործող խմբին, կը կատարեն իրանց պարտաւորութիւնները միւս պատգամաւորների հետ հաւասարապէս։ Իսկ այն խնդիրներում, որոնք վերաբերում են Կովկասին, նրանք պարտաւոր են կատարել յատուկ պատասխանատու դերեր, որոնց համար անհրաժեշտ է և նախապատրաստութիւն։

II

Մենք «Մշակի» մէջ յայտնեցինք, որ մեր երկրի գործող խմբերը պէտք է չը խզեն իրանց կապը կովկասեան պատգամաւորների հետ և պահպանեն սերտ յարաբերութիւններ նրանց հետ, աշխատելով աջակցել և գործակցել նրանց, որպէս զի նրանք կարող լինեն մեր երկրի կարիքները և պահանջները ներկայացնել լուրջ և արժանաւոր կերպով։

Մենք Անդրկովկասում մնացողներս դեր ունենք կատարելու այդ գործի մէջ և կարևոր դեր, որի մասին պէտք է առանձին հոգատարութիւն ունենալ։

Բայց այդտեղ չափազանց կարևոր է, որ իրանք պատգամաւորները Պետերբուրգի կովկասեան համայնքի ներկայացուցիչների և նոյն իսկ պարլամենտի որոշ անդամների հետ կազմակերպեն խորհրդակցութիւններ՝ կարևոր հարցերի քննութեան համար և միջոցներ ձեռք առնեն ունենալու Պետերբուրգում թէ լիակատար գրականութիւն Կովկասի մասին և թէ ընթացիկ հաղորդագրութիւն երկրի դրութեան մասին։

III

Արդարև, ինչ կարող է անել կովկասեան պատգամաւորը պարլամենտում, երբ նա իր ձեռքին, իր անմիջական տրամադրութեան տակ չունի այն նիւթերը, որոնք հարկաւոր են իր հարցապնդումներն անելու, իր յայտնած կարծիքները պաշտպանելու, իր առաջարկութիւնները համոզիչ դարձնելու համար։

Անկասկած, անհրաժեշտ են նաև յատուկ նոր աշխատանքներ, որպէս զի լրացվեն այն նիւթերը, որոնք արդէն գոյութիւն ունեն։ Բայց չը պէտք է մոռանալ և այն՝ որ արդէն գոյութիւն ունեցող նիւթերն էլ ցրված են զանազան հրատարակութիւնների մէջ, իսկ մի քանիսը կամ սահմանափակ քանակով են լոյս տեսել, կամ ամենևին տպագրութեան չեն յանձնվել և կարող են ձեռք բերվել միայն մասնաւոր անձերից կամ որոշ հաստատութիւններից։

Պատգամաւորները պէտք է կարող լինեն անհրաժեշտ դէպքերում օգտվել այդպիսի նիւթերից։ Ուստի և է հոգատարութիւն պէտք է ունենալ, որ այդ նիւթերը կարողանան նրանց տրամադրութեան տակ լինել։

VI

Մենք կարծում ենք, որ Պետերբուրգի հայերի վրա մի բարոյական պատասխանատուութիւն է ծանրանում աջակցելու ամեն կերպ այդպիսի մի գործի կազմակերպութեան։

Աչքի առաջ ունենալով, որ Պետերբուրգում կովկասեան ազգերի մէջ համեմատաբար աւելի ստուար համայնք ունեն հայերը, որ հայերն ունեն այնտեղ որոշ հաստատութիւններ, գումարներ և գործողների մի խումբ, արդարացի է պահանջել, որ հայերը աւելի մեծ և եռանդուն մասնակցութիւն ցոյց տան ներկայ խնդրում և ամեն կերպ նպաստեն յարմարութիւններ ստեղծել՝ այնտեղ ժողովելու այն բոլոր նիւթերը, որոնք հարկաւոր կը լինեն կովկասեան պատգամաւորների համար։

Դա հեշտ գործ չէ. բայց կարևոր և անհրաժեշտ է։ Իսկ երբ նա կարևոր է, պէտք է նրան կատար ածել, չը խնայելով նեղութիւն, աշխատանք և մի քանի անհրաժեշտ ծախքեր։

Թող Պետերբուրգի հայ համայնքի գործողները լուրջ մտածեն այդ բանի մասին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևան, 29 մայիսի 2 ժամ 10 ր.

-Նոր ընդհարումներ տեղի չեն ունեցել։ Այսօր հանգիստ է։

Հայերից վիրաւորված են 9 և սպանված 16, թուրքերից վիրաւորված 6, սպանված 4։ Բացի այդ սպանված է 1 մօլօկան, վիրաւորված են 1 վրացի, 1 հրէայ և 1 ասորի։

Բանտարկված են երեք թուրք, որոնք ներգործական դեր էին կատարում։

Երևանում լուրեր են տարածվել, որ իբր թէ յունիսի 12-ին պէտք է տեղի ունենան ընդհարումներ։

—

Երևան, 29 մայիսի

Մինչև այժմ դեռ չէ պարզվել թէ ովքեր են եղել առաջին ատրճանակ արձակողները։ Ցուցումները հակասական են։

Իշխանութիւնը ուղանք նշանակեց այն խանութների վրա, որտեղից արձակված էին ատրճանակներ։

—

Երևան 27 մայիսի

Այսօր քաղաքային կլուբի մօտ առաւօտեան ժամը 9-ին տեղի ունեցաւ թուրքերի կողմից յանկարծակի յարձակում հայերի վրա, որը արձագանք տուեց Ղասաբխանի, Ցախի մէյդանի թուրքերի մէջ, որոնք նոյնպէս սկսեցին կրակել այդտեղ գտնվող հայերի վրա։ Առ այժմ սպանվածներից յայտնի են 4 հոգի հայեր, որոնցից մէկը Էջմիածնի թանգարանի վերակացու Հաչին է. սպանվել է մէկ թուրք և վիրաւորված կան 10 հոգի, որոնցից մէկը վրացի, մէկը հրէայ՝ ծանր, մէկ մօլական և միւսները հայեր։ Բոլոր խանութները փակ են։ Թուրքերը բոլորպէս փախան անյայտացան, իսկ հայերը դեռ շրջում են բուլվարում, խանութների մօտ. դրութիւնը կրիտիքական է։

Պար. Տէրունեանց

—

Երևան, 27 մայիսի

Այսօր, առաւօտեան մօտ ժամը $9^{1}/_{2}$-ին, Երևանում տեղի ունեցաւ հետևեալ դէպքը։ Մէյդան կոչված տեղում երկու թուրք սկսում են կռուել իրար հետ։ Երբ միջամտում են, թուրքերից մէկը յետ է դառնում և խփում մի հայի։ Գօրօդօվօյները աշխատում են թուրքին հեռացնել, բայց թուրքը յամառ կերպով սկսում է յետ դառնալ և կռուել, որին միանում են և մի խումբ ուրիշ թուրքեր։ Հայերը տեսնելով, որ սա նախապատրաստված բան է, սկսում են յետ քաշվել, իսկ հեռու գտնվածները փախչել։ Թուրքերը նկատելով հայերի անզէն լինելը, սկսում են չարսունիներից կրակել հայերի վրա։ Վիրաւորվում են մօտ 10—15 հայ և սպանվում են 5—10 հայ, մի մօլական և մի վրացի։ Զինուորները բռնել են 4—6 խփող թուրքի, որոնցից առել են ատրճանակներ և խենչալներ։ Վիրաւորվածների մէջ է և Էջմիածնի գրադարանապետը (տաճկաստանցի)։ Կրկին վիրաւորվածներ են բերում քաղաքի զանազան կողմերից։ Ինչպէս ասում են, ոչ մի թուրք չէ վիրաւորված և սպանված.

Գ. Աղազադեանց

—

Թարթառ 28 մայիսի

Այստեղ հասաւ գեներալ Գօլօշչապօվ։ Թուրքերը ներկայացան և խոստացան հանգիստ լինել։ Գեներալը հրամայեց նրանց վերադառնալ իրանց գիւղերը և սկսել երկրագործական աշխատանքները։ Այդ գիւղերն են Ումուդլու, Դամիրլար, Բրուջ, Աջիքեր, Բաղենդ Չիրախլու։

—

Շուշի, 28 մայիսի

Քաղաքիս մօտիկ Ղայբալի գիւղից 5 հայ ուտելու պաշարեղէն են բերելիս լինում քաղաք։ Շուշու թուրքերից մի խումբ, քաղաքից դուրս, յարձակվում են այդ հայերի վրա, 4 հոգուն սպանում են, իսկ մէկը փախուստ տալով կարողանում է ազատվել։

—

Շուշի, մայիսի 26-ին

Ամսիս 25-ին Գիւլափլու գիւղի մի քանի թուրքեր՝ զանազան կեղծ-բարեկամական ձևեր գործադրելով՝ երեք հայի հրաւիրում են Գիւլափլու գիւղը կեռաս ծախելու պատրուակով. երեք հայերին էլ սպանում, դրանց մօտ եղած զէնքերը վերցնում և փախչում են Աղդամ։

Այսօր տեղիս թուրքերի մի խումբ յարձակվում է փայտատար հայ կարաւանի վրա. հայերը փախչելով կարողանում ազատվել՝ թողնելով թուրքերի ձեռքում 2 ջորի, որոնք վերցնելով ջորիները վերադառնում են քաղաք։

X

—

Զարդախլու, 24 մայիսի

Մեզ մօտ մայիսը քոչերի ամիսն է։ Համարեա ամեն օր բարձրանում են մեր գիւղով դաշտի թուրքերը, մեծ մասը զինված «բատ օրինի» «արտօնեալ», փամփուշտակալները աջ ու ձախ։ Նրանց մէջ տեսանք և մի ժամուզեր հրացանաւոր։ Չը նայելով, որ դրագուններ կան, նրանք անարգել անցնում են, իսկ պրիստաւ Մուսէիբ Ալիեվը անցեալ օրը երեք հայ մշակի Գետաբէկում խուզարկելէ տուել կօզակներին, թէև ոչինչ չեն գտել։ Բաղեցեք անցնող քոչերից և Դալլարի սայլերից 12 եզ ու գոմէշ են բռնել։ Երկուսը յօժարակամ յանձնեցին, որ գնել էին Խնուսլուից, իսկ մնացածների համար երդվում են, որ իրանցն է և գանգատ են ներկայացրել։ Այս բանի համար դալլարցիք մեր գիւղացիներին սպառնալիք են տալիս, որ մեզ հետ այդպէս պէտք է վարվեն, երբ մենք էլ գնանք Դալլար։

Ամսիս 22-ին գիշերը, 25 հոգի զինված թուրքեր՝ մեր հանդում պատահելով մեր գիշերապահին, փախուստ են տալիս, երբ վերջիններս կամենում են ձերբակալել, չը նայելով իրանց թւով քիչ լինելուն (4 հոգի)։ Նրանք եկած են լինում սալար փախցնելու։

—

Ղաթարի գործարաններ, մայիսի 22-ին

Երէկ, մայիսի 21-ին, Շիրվանիձոր գիւղից Շիկահող գիւղ եկող 9 հայերի վրա կրակ են բաց անում ճանապարհում դիրք բռնած 50-ի չափ զինված թուրքերը և սպանում 3 հոգու, իսկ մնացած 6 հոգուն աջողվում է ազատվել։ Մի ամիս դեռ չէ անցել, երբ թուրքերը նոյն ճանապարհի վրա սպանել էին Շիկահողից Ճկրտին եկող երկու հայերի։ Խեղճ հայեր, վստահացած գաւառապետ Միխեևիչի կայացրած հաշտութեանը, անմիտ կերպով շարունակում են իրանց ճանապարհը. ինչ իմանայ հայը, թէ ո՞ր ճանապարհի վրա է դիրք պահում թուրքը. որ այն ճանապարհով չանցնի, կամ որտեղից կարող է իմանալ թուրքի միտքը, ինքը հաշտ է, երևակայում է որ թուրքն էլ հաշտ կը լինի։ Չը նայած որ շատ գիւղերում կանգնած են կօզակներ օֆիցերներով, մեր դրացի թուրքերը այսպէս են վարվում մեզ հետ, իսկ եթէ կօզակները գնան, Աստուած գիտէ ի՞նչ կարկուտ են թափելու մեր գլխին։

Սողոմոն

—

Խանքենդի, մայիսի 26-ին

Մայիսի 20-ին Բալլուջայ գիւղի հասարակութիւնից 15 մարդուց բաղկացած մի պատգամաւորութիւն, ներկայացաւ տեղիս գեներալ-նահանգապետին։ Նահանգապետը սիրով ընդունելուց յետոյ, հարցրեց, թէ ինչ գործի համար են եկել։ Պատգամաւորութեան կողմից առաջ եկաւ պ. Զիւմշուդ Բ. Վերդիեանն և պատասխանեց։

«Ձերդ գերազանցութիւն, վերջին ժամանակներս Մալիբէկլու գիւղում հաւաքվել են զանազան տեղերից քրդեր, միացել տեղական աւազակների հետ, կազմել աւազակախմբեր, որոնք յարձակվում են խճուղիով անցուդարձ անող ճանապարհորդների վրա ու անխնայ կերպով կողոպտում և սպանում են առանց ազգի խտրութեան։ Ցաւալին այն է, որ սպանելուց յետոյ դիակը բերում գցում են մեր հասարակութեան դաշտերը, որպէս զի դրանով կարողանան մի կերպ մեզ, ամեն ժողովուրդիս, մեղաւորցնել և անուանարկ անել կառավարութեան առաջ։

Նահանգապետը.—Դուք ինձանից առաջ պրիստաւին կամ գաւառապետին դիմել էք այդ մասին։

Վերդիեան.—Մենք ամեն ժամանակ դիմել ենք ուր հարկն է, բայց մեր ձայնը լսող չէ եղել և միշտ անկատար է մնացել մեր խնդիրքը։

Նահանգապետ.—Ամեն տեղ ուժեղ պահակներ են դրված, որոնք հսկում են խճուղու վրա. այսուհետև էլ սպանութիւններ չը պիտի լինեն միայն դուք խաղաղ մնացէք։

Վերդիեան.—Ձերդ գերազանցութիւն մեր խաղաղ երկրագործ ժողովրդին մի կողմից էլ մեզանից վերև, անտառներում ապրող քրդերը չեն թողնում հանգիստ ապրել. նրանք միշտ աւազակութեամբ են պարապում։

Նահանգապետ.—Օրինակ նրանք ինչ վնաս են հասցնում ձեզ։

Վերդիեան.—15 օր սրանից առաջ 12 գլուխ եզ և գոմէշ, երկու հատ ձի գիշերն արածացնելիս՝ գիւղից մէկ վերստ հեռաւորութեան վրա, յարձակվում են տաւարածների վրա և քշում տանում։ Միևնոյն օրը յայտնում ենք պրիստաւին և գաւառապետի օգնականին. միւս օրը վերջինս գալիս է 15 կօզակների հետ, հետքը տանում մինչև քրդերի սահմանները. բայց մի կողմից մթութիւնը, միւս կողմից անյարմար ճանապարհները ստիպում են յետ դառնալ և դեռ այնպէս էլ մնում է։

Նահանգապետ.—Ի՞նչու գիշերներն արածացնել, քանի որ ժամանակը երկիւղալի է։

Վերդիեան.—Որովհետև ցերեկները շարունակ լծած է լինում գութանում մեր դաշտերը մշակելու համար։

Նահանգապետ.—Իսկ ձեր գիւղում հացի կողմից նեղութիւն քաշում են թէ ոչ։

Վերդիեան։ —Ձերդ գերազանցութիւն, մեր ժողովուրդն ութ ամսից աւելի է, որ հաց է առնում, որովհետև անցեալ տարվայ ցանածը մի մասը կարկուտը փչացրեց, միւս մասը հայ-թուրքական ընդհարումների շնորհիւ ոտնակոխ եղաւ և թշնամիների կերակուր դարձաւ։ Կան մարդիկ, որոնք իրանց տան բոլոր կահկարասիքը ծախել են հացի համար. այժմ ոչ հաց ունեն, ոչ փող, ոչ կահկարասիք. իսկ դուրսը թշնամիներով շրջապատված՝ ոչ մի տեղից եկամուտ չը կայ։ Ուստի ամբողջ հասարակութեան բերանից խոնարհաբար խնդրում ենք աչքի առաջ ունենաք մեզ։

Նահանգապետ.—Շուտով ճանապարհները կը բացվեն և ամեն մարդ իր ազատ աշխատանքին կը գնայ։

Սրանով վերջացաւ նահանգապետի խօսակցութիւնը։

—

Թէլաւ, 27 մայիսի

Թէլաւ քաղաքի մօտ Կախետինսկի կոչված ճանապարհի վրա կողոպտված է պօստը։ Աւազակները, թւով 20 հոգի, դարանամուտ լինելով անակնկալ կրակ են, բացել. պօստին ուղեկցող ստրաժնիկները և ձիերից մէկը սպանվել են։ Աւազակները տարել են 10000 րուբլի։ Նրանց ետևից զօրք է ուղարկված։

(Հեռ. Գործ.)

—

Պրօֆեսոր Ն. Մառը վաղը չորեքշաբթի, մայիսի 31-ին Թիֆլիսի ժողովարանի ձմեռային դահլիճում կը կարդայ մի դասախօսութիւն «Անիի աւերակների մասին»։ Դասախօսութիւնը բաղկացած կը լինի երեք բաժանմունքից։ Դասախօսութեան միջոցին ցոյց կը տրվեն մոգական լապտերով բազմաթիւ նկարներ վերցրած Անիի տեսարաններից և պեղումների ժամանակ բացված հնութիւններից։

—

Աստրախանից հեռագրում են, որ այնտեղ Վեհափառ Կաթողիկոսի կոնդակի ստացման առիթով կատարվել է եկեղեցական հանդէս, խօսվել է ճառ։ Հասարակութեան վրա լաւ տպաւորութիւն է թողնել կոնդակը։

—

«Т. Л.» լրագրում տպված է հետևեալ շատ բնորոշ նամակը.

«Յարգելի պ. խմբագիր, ծառայելի Թիֆլիսի քաղաքային ոստիկանութեան մէջ 6 տարի. այդ ժամանակամիջոցում, ես համապատասխանում էի իմ պաշտօնին, որովհետև իշխանութիւնից, գողերին ձերբակալելու և գողացված իրերը գտնելու համար, շատ յաճախ պարգև էի ստանում։ Յետոյ ինձ նշանակեցին Մէտեխի բանտի վերահսկիչի օգնականի ժամանակաւոր պաշտօնավար, իսկ յետոյ Գանձակի գաւառապետ Գետաբէկ աւանի պրիստաւ Նոյեմբերի 14-ին ես գնացի Գանձակ ներկայացայ գաւառապետին, և ստանալով նրանից 4-րդ գաւառամասը ընդունելու հրամանագիրը, գնացի իմ ծառայութեան տեղը։ Նոյեմբերի 17-ին հասնելով Գետաբէկ, պրիստաւի պաշտօնը ինձ յանձնելու հրամանագիրը ներկայացրի պրիստաւի ժամանակաւոր պաշտօնավար Մուսէիբով-բէգ-Ալիևին։ Պրիստաւ Ալիևը խնդրեց ինձ շրջել գիւղերը, մինչև թղթերը կը պատրաստվեն. ես այցելեցի Ֆրէզովկա Սլավեանկա և Զարդախլու գիւղերը։ Երբ հասայ Զարդախլու, նոյեմբերի 20-ին, բնակիչները ինձ ասացին, որ պրիստաւ Ալիևը և Շամխօրսկին ագիտացիա են անում թուրքերի մէջ, որպէս զի նրանք կոտորած սկսեն։ Նոյեմբերի 21-ին ես կրկին վերադարձայ Գետաբէկ. դեռ Գետաբէկ չը հասած, Սլավեանկա գիւղի բնակիչները յայտնեցին, որ թուրքերը ուզում են գիշերը յարձակվել գիւղի վրա. այդ ի նկատի առնելով, ես 5 պահապաններով մնացի Սլավեանկա գիւղում։ Երեկոյեան ժամը 7-ին այդ գիւղը եկան 800 զինված թուրքեր և խօսք տուին ռուսներին ձեռք չը տալ, բայց կոտրեցին 2 խանութ—Յովսէփեանի և Մնացականեանի, տարան 2 ֆուրգօն ապրանք, նախազգուշացնելով դուխօբօրներին, որ նոյեմբերի 22-ին պէտք է աւերեն Գետաբէկում հայերի բոլոր խանութները։ Նոյեմբերի 22-ին ես Սլավեանկից Զարդախլու ուղարկեցի մօտ 30 հոգի, իսկ ինքս գնացի Գետաբէկ և խնդրեցի Ալիևին, որ ինձ յանձնի գաւառամասը, որի վերաբերեալ պրիստաւ Ալիևը յայտնեց, որ առ այժմս չէ կարող յանձնել գաւառամասը, որովհետև զբաղված է ուրիշ գործերով։ Ես հայերին տեղեկացրի թուրքերի կողմից դուխօբօրներին ասած լուրը. նոյն օրը, հայերը, ովքեր կարողացան, հաւաքեցին իրանց ընտանիքը և գոյքը և տեղափոխեցին մօտակայ Ղազախլու գիւղը։ Պրիստաւ Ալիևը և Շամխօրսկին համոզում էին մնալ իրանց տներում, աւելացնելով, որ նոր պրիստաւը «յիմար է», նա ձեզ խաբում է, նրան չը լսէք և այլն, բայց հայերը չը լսեցին պրիստաւ Ալիևին։ Երեկոյեան ժամը 7-ին Գետաբէկը շրջապատվեց թուրքերով, և, Մնացականեանի խանութից սկսեցին կոտրատել և թալանել բոլոր խանութները։ Աւերումը շարունակվեց մինչև նոյեմբերի 24-ը։ Երբ ես նկատեցի, որ պրիստաւ Ալիևը բոլոր ժամանակ ագիտացիա էր անում թուրքերի մէջ, ես գնացի նրա մօտ և ասացի, որ դա լաւ բան չէ, սպանվեցին շատ հայեր, մի որևէ ձևով պէտք է դադարեցնել կոտորածը։ Ալիևը պատասխանեց, որ հարկաւոր է ոչնչացնել բոլոր հայերին, իբրև վնասակար մարդկանց, որ նրանք շատ խորամանկ են և շատ յաճախ սպանում են նահանգապետներին, պրիստաւներին և պահապաններին։ «Ես ինքս ամբողջ 3 տարի փախստական էի, աւելացրեց Ալիևը, Պարսկաստանում էի, բայց ես եկայ խոստովանեցի յանցանքս գլխաւորին և ինձ բոլորը ներեցին. իսկ հայերը նոյն իսկ չեն ընդունում իշխանութիւնը»։ Նոյեմբերի 25-ին, երեկոյեան դէմ ինձ մօտ եկան 2 պահապաններ—Աստան Աղաս-բէկով և Բելիկօվը և զեկուցեցին, որ հիւանդանոցից, ուր գտնվում են մօտ 60 հայեր, Ալիևը տարաւ իր բնակարանը 2 հայ օրիորդների։ Միւս օրը, վաղ առաւօտեան, ես գնացի նրա բնակարանը, ուր իսկապէս տեսայ 2 հայ օրիորդների, յատակի վրա նրա հետ քնած։ Ես հարցրի նրան, թէ ինչի՞ց է նա բերել իր բնակարանը այդ օրիորդներին. Ալիեվը պատասխանեց, որ նրանց համար այնտեղ շատ նեղուածք է և վտանգաւոր, խպայտեղից ոչ ոք չի վստահանայ նրանց տանել։ Միւս օրը ես Ալիեվի հետ միասին գնացի զինամթերի պահեստատեղին։ Մենք նկատեցինք, որ հայերը թողել են Ղազախլու գիւղը և տեղափոխվեցին Չարդախլու գիւղը։ Ալիեվը 2 պահապանների հետ ցած իջաւ և սկսեց ծեծել թուրքերին, որպէս զի նրանք վազեն հայերի ետևից, բայց թուրքերը հայերին չը հասան. այն ժամանակ թուրքերը սկսեցին կողոպտել հայերի գոյքը և աւերել Ղազախլու գիւղը. բոլորը հողի հետ հաւասարացրին։ Այն ժամանակ ես իսկոյն 2 պահապաններով գնացի Գանձակ և զեկուցեցի այդ բոլորը նահանգապետին, իսկ պահապաններ—Բէլիկովը և Անսան—Աղաս-բէկովը իրանց կողմից գրաւոր կերպով զեկուցեցին գաւառապետ Աւալեանին պրիստաւ Ալիեվի մասին։ Նահանգապետը առաջարկեց գաւառապետ Աւալեանին իսկոյն ինձ հետ գնալ և քննութիւն կատարելու, Գաւառապետ Աւալեանին ինձ հետ ուղեւորվեց Գետաբէկ, բայց դեռ Դալլեար կայարանին չը հասած, Աւալեանին առաջարկեց ինձ գնալ Թիֆլիս նրա եղբօր ետևից։ Ես բացատրեցի, որ կը գնամ, միայն ոչ հիմա, այլ քննութիւնից յետոյ. գաւառապետը ասաց ինձ, որ ես անճշտապահ աստիճանաւոր եմ և նրա հետ ծառայել չեմ կարող և իրան չը հնազանդվելու պատճառով պաշտօնից կը հեռացնի։ Այդպիսի խիստ հրամանի պատճառով ես ստիպված էի նրա եղբօր ետևից գնալ Թիֆլիս, որը և տարայ Գանձակ։ Մօտ մի շաբաթից յետոյ գաւառապետը վերադարձաւ Գետաբէկից։ Նա ինչ ասաց նահանգապետին, ինձ յայտնի չէ, միայն ինձ կանչեց գաւառապետը և նախ հարցրեց. «բերե՞ր իմ եղբօրը»։ Ես պատասխանեցի «այո»։ «Յետոյ նա ասաց, որ ես իմ «կոչմանը չեմ համապատասխանում»։ Եւ ես այդ օրվանից նշանակված եմ նահանգական վարչութեան մէջ, ահա արդէն 5 ամիս է, առանց թոշակի։

Որ վարչութեանն էլ դիմում էի պաշտօն խնդրելով—ամէն տեղ իրանց մերժումը պատճառաբանում էին նրանով, որ ես իմ» կոչմանը չեմ համապատասխանում»։

Կոմմենտարիաները աւելորդ են։

8-րդ քաղաքամասի նախկին պրիստաւ Ալեքսանդր Իոսիֆովիչ Շեպլը։

ԵՐԵՒԱՆԻ ԴԷՊՔԸ

Մայիսի 28-ին

Մայիսի 27-ի դէպքի մասին մի ականատես հետևեալը պատմեց։

Քաղաքային կըզի մօտ ես տան համար ձուկ, պանիր էի առնում։ Առաւօտեան ճիշդ ժամը 9-ին տեսայ, որ դէպի թուրքերի խանութները տանող ճանապարհից մի խումբ թուրքեր են գալիս քաղաքային կըզի ուղղութեամբ։ Նրանք երբ տեղ հասան, պանիր բերող քըրդերը և ցրեն ծախող թուրքերը երկու րօպէի չափ առանձնացան մի կողմ ու սկսեցին հեռանալ։ Հայերը միամիտ իրանց առ ու ծախսի հետ էին. յանկարծ թուրքերը յարձակվեցին սկզբից սառը զէնքով և յետոյ ատրճանակի հարուածներով, որը տևեց մօտաւորապէս 10 րօպէ։ Հայերը անպատրաստ՝ իսկոյն փախան, ցրվեցին, թողնելով մի քանի դիականեր, ցրվեցին նոյնպէս թուրքերը։ Բայց հայերից մի քանիսը կարողացան իմանալ թէ էջմիածնի թանգարանի վերակացուին ով էր խփողը։ Վերակացու Հաջին կառքով էջմիածնից գալիս է և կառքից իջնելով քաղաքային կըզի շինութեան մէջ[illegible]ով անցնելիս է լինում դէպ հայերէ [illegible], երբ [illegible]րագործ թուրքի գնդակը գետին գլորեց նրան։ Չարագործը Սեբերից նոր եկած թուրք է և ունի խանութ քաղաքային կըզի մօտ։ Թաղիանոս Թաղիանոսեանը թուրքին բռնում է, թուրքը նորից փախչում է, ապա նորից բռնում և յանձնում առաջին ոստիկանատան պրիստաւի օգնականին՝ որը ասելով թէ «чортъ знаетъ онъ виноватъ или другой» բաց է թողնում, Այս բանը պ. Թաղիանոսը իմանում է և ուղղակի դիմում է փոխ-նահանգապետին, որը Թաղիանոսի հետ գնաց գործողութեան վայրը, ուր նա համոզվեց, որ թուրքն է մեղաւոր, հրամայեց, որ թուրքին անպատճառ բռնեն և բերեն ոստիկանատուն։

Ցախի մէյդանում, Հաջի աղի քարվանսարայի մօտ մի ցախավաճառ հայ արաբաչու վրա յարձակվեցին 7—8 թուրքեր խանչալներով, բայց քաջ արաբաչին իր ձեռի փայտով հարուածում է աջ ու ձախ և չէ թողնում, որ թուրքերը իրան խփեն, բայց վերջը աջ թևից թեթև վիրաւորվում է խանչալով։ Մինչև երեկոյ յայտնի եղաւ, որ հայերից սպանվել են 16 հոգի, իսկ թուրքերից 2-ը, այն էլ զինւորների գնդակից։ Երկու կողմից էլ խաղաղարար յանձնաժողովի անդամներից դիմեցին նահանգապետին օրվայ դէպքի առիթով։ Հայերը խնդրեցին, որ բռնված թուրքերը անմիջապէս խիստ կերպով պատժվեն և միևնոյն ժամանակ այգիները վտանգից ազատելու համար կարգադրել, որ պահապաններ նշանակվեն։ Թուրքերն էլ էին պնդում, որ չարագործներին պատժեն և զինւորներին շնորհակալութիւն էին յայտնում։ Վիրաւորներ կան 9 հոգի, որոնցից 6 հայ, երեք լուրջ վիրաւորված, իսկ մնացածը մի մօլոկան, մի վրացի և մի հրեայ լուրջ. բայց դեռ կենդանի են։

Ցերեկվայ ժամի 12-ին եղաւ ուժեղ հրացանաձգութիւն հայերի և թուրքերի թաղերում և տևեց 12 րօպէ. իսկ ժամի 2-ին նորից վերսկսվեց թեթև և րօպէապէս ձայնը կտրվեց։ Այնուհետև լուր տարածվեց թէ ժամանակաւոր գեներալ-նահանգապետի խորհրդի կարգադրութեամբ վճռված է ռմբակոծել այն տները, որտեղից որ մի ձայն կը լսվի։

Երբ որ խաղաղութիւնը սկսվում է, 2 թուրքի վրա անյայտ մարդիկ ատրճանակ են արձակում և փախչում։ Փողոցում շրջող զինւորները երբ թէ հետամուտ են լինում ատրճանակ արձակողին և, ինչ զարմանք, փողոցից թեքվում են դէպի Դատամեանի տունը ու դրան վրա արձակում են մօսինի մի գնդակ և երեկոյեան Դատամեանի տղային տանում են ոստիկանատուն երկու զինւորներով, պրիստաւի օգնական Սաւլիարովի առաջնորդութեամբ։ Դատամեանի տղան պնդում և հաւատացնում էր, որ ինքը «ոչ մի բանից խաբար չէ, թէ անյայտ մարդիկ կրակել ու փախել են». բայց լսողն ով է։

Այնտեղ, քաղաքի կենտրոնում, տասնեակներով հայերի դիակներ են թափում թուրքերը և չեն պատժվում, իսկ այստեղ թուրքի վրա գնդակ են գցել, այն էլ ով է իմանում թէ որտեղից, իսկոյն բանտարկում են։ Ուրիշ տեղերում երբ մի թուրք է սպանվում, հայերից 3000—4000 րուբլի տուգանք են առնում և պահանջում չարագործներին, հակառակ դէպքում ռմբակոծում, իսկ այստեղ թուրքերը մեզ կոտորում են ու տուժողը հայն է։ Գիշերը անցաւ խաղաղ, միայն լսվում էր մի քանի գնդակների սուլոց։ Այսօր կիրակի է և հայերի խանութները փակ են։

Պ. Տէրունեան

ՄԱՄՈՒԼ

Բագւում մայիսի 26-ին սկսեց հրատարակվել մի նոր, հայ-թուրքական թերթ՝ «Կոչ» և «Դավէթ» վերնագրով։ Նոր թերթը իրան նպատակ է դրել խաղաղութիւն հաստատել. «խաղաղութիւն յանուն մարդկային լաւագոյն ուխտի, որը միանգամայն զարշում է՝ ամէն մի սպանութիւնից. խաղաղութիւն յանուն մարդկային յառաջադիմութեան. վերջապէս խաղաղութիւն յանուն շահագործվող մասսայի յաղթական կռւի, ընդդէմ իրանց շահագործողների, ստրկացնողների»—ահա այն հիմնաքարը, որի շուրջը նոր հայ-թուրքական թերթը պէտք է արծարծէ իր հարցերը։

Ազգերի մէջ համերաշխութիւն, սէր և խաղաղութիւն սերմանելու ու քարոզելու գաղափարը ինքն ըստ ինքեան վեհ գաղափար է և մեր երկրի լաւագոյն ոյժերը շարունակ գործել են այդ ուղղութեամբ։ Այդ ասպարիզում ոչ սակաւ գործել է և մեր թերթը իր ամբողջ գոյութեան ընթացքում։ Նոր թերթի առաւելութիւնը կայանում է նրանում, որ նա միաժամանակ ազդելու է և հայ և թուրք ընթերցողների վրա և մի տեսակ զօդիչ կապ է լինելու այդ երկուսի մէջ։ Ամբողջ առաջին համարը նուիրված է հայ-թրքական յարաբերութիւնների խնդրին։ Հայ մասի խմբագիրն է Տ. Յարութիւնեան, իսկ թրքական մասի՝ Ի. Աշուրբէկօվ։

Կատարեալ աջողութիւն ենք մաղթում նոր թերթին իր ընտրած ասպարիզի մէջ։

*

Յայտնի սօցիալիստ Պլեխանօվը «Կուրիէր» թերթի մէջ մի շարք հետաքրքիր նամակներով քննելով «տակտիկայի և անտակտութեան» մասին, այն արդար միտքն է յայտնում, թէ որքան անհիմն է, երբ բուրժուազիայի վրա նայում են իբրև մի հոծ ռեակցիօնական մասսայի վրա։

«Միջազգային սօցիալիզմի լաւագոյն ներկայացուցիչները—ասում է նա—վաղուց ճանաչել են, որ տեսական և տակտիքական մեծ սխալ գործած կը լինէր սօցիալ-դէմօկրատիան, եթէ մոռանար, որ բուրժուազական զանազան կուսակցութիւնները զանազան գոյներով են ներկված, ուստի և պրօլետարիատի համար միևնոյնը չէ, թէ այդ կուսակցութիւններից որն իշխանութեան գլուխն է անցել։ Արևմտեան Եւրօպայի սօցիալ-դէմօկրատիական պրօլետարները շատ լաւ հասկանում են այդ և ահա ինչի կրկնաքուէարկութիւնների ժամանակ նրանք ձեռնպահ չեն մնում ձայնատւութիւնից, երբ կորցնում են իրանց սեփական թեկնածուին անցկացնելու հնարաւորութիւնը, այլ սովորաբար ձայն են տալիս բուրժուազական կուսակցութիւններից ամենաառաջաւորին»։

«Պրօլետարիատի տակտիկան—շարունակում է Պլեխանօվը—պէտք է խիստ կերպով համաձայնեցրված լինի նրա մօտաւոր քաղաքական նպատակի հետ։ Բայց մեր պրօլետարիատի մօտաւոր քաղաքական նպատակը այժմ ոչ թէ յեղափոխական դիկտատուրայի նուաճումն է իր համար, այլ ժողովրդական վեհապետութեան յաղթանակն է, այսինքն մի հին կարգի տապալումը, որը կարելի է անուանել նախա-բուրժուազական կարգ և որի գոյութիւնը արգելք է հանդիսանում պրօլետարիատին՝ հասունանալու իր դասակարգային դիկտատուրայի համար»։

Դժբաղդաբար, այսպիսի ճշմարտութիւնները անկարող են լինում հասկանալու մի քանի ծայրահեղ կուսակցութիւնների ներկայացուցիչները։

*

Հռոմից մեր խմբագրութիւնը ստացել է մի շրջաբերական, որից երևում է որ Քրիստափոր Կոլումբոսի մահվան IV հարիւրամեակի առիթով, որ լրացաւ այս մայիսի 20-ին (1506 թ. մայիսի 20) որոշված է մի արձան կանգնեցնել Վատիկանում միջազգային հանգանակութեամբ։ Հռոմի պապը իր հաւանութիւնն է տուել Վատիկանի մասին։

*

«Ձայն Հայրենեաց» շաբաթաթերթի մէջ (№ 392) արտատպված է Նպաստամատոյց յանձնաժողովի գանձապահ պ. Ալ. Մելիք-Ազարեանցի այն նամակը, որ տպվեց «Մշակի» մէջ նուէրների մասին (չը գիտենք ինչու թերթը ասում է թէ նամակը տպված է «կովկասահայ թերթերու մէջ») և իր կողմից աւելացնում է, թէ այդ նամակի ընթերցումը «չի կրնար տեսակ մը հպարտութեամբ չի լեցնել Ամերիկահայերս»։ Ինչպէս գիտենք, պ. Մելիք-Ազարեանցը այդ նամակով գանգատվում էր, որ Կովկասի և Ռուսաստանի հայ հարուստները չեն կատարում իրանց բարոյական պարտականութիւնը և նպաստներ չեն հասցնում յանձնաժողովին, մինչ Ամերիկա գաղթած հայ եղբայրները ամեն օր, ամեն շաբաթ ուղարկում են գումարներ իրանց համակրական և ցաւակցական նամակներով։

ՔՈՉԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Մայիսի 21-ին

Գեազանում թարաքեամաները շոգից ու տօթից նեղվելով, անհնարին եղաւ մնալ կամ սպասել կառավարութեան կարգադրութեան, ուստի ամսիս 16-ից սկսած չւում են դէպի սար։

Ղափանում արդէն երկու շաբաթ է, որ քոչը շարժվել է և ոչ մի յարձակման դէպք տեղի չէ ունեցել։

Մեղրանում քոչը անցնում է Խնձորեսկի և Գորիսի մօտով, Էլ-Եօլի մեծ ճանապարհով։

Պատահական անկարգութիւնների առաջն առնելու համար, Խնձորեսկում 50 հոգուց բաղկացած կօզակների պահակախումբ կայ, որոնց պարտքն է Հարամի՛ ծառից, (Խնձորեսկից ցած) մինչև Գորիսի սահմանը շրջել և հսկել ամբողջ ճանապարհը։ Սակայն հազար ու մի խնդիրքից յետոյ են բարեհաճում գնդից ոտք դուրս դնել, այն էլ ոչ քո ցանկացած ժամին։

Թուրքերի պատմածները, թէ Գեազանում նրանց վրա առանձին հսկողութիւն կայ, սուտ և շինծու դուրս եկան։ Մինչև այժմ խաղաղ կերպով անցել են Մահմադ պայլու, Ջաբրայլու, Հաջիլու, Ղարահնդիկլու, Ալիանլու և Ջուլլու օյմաղները և ուրիշները, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է մի քանի գիւղերից։

Ամսիս 17-ին երբ, Ղարահնդիկլուեցիք խմբովին իջել էին մեզնից ցած Ուղլեցի թուրքական գիւղի կալերում, անկարգութիւն է ծագում, որին հետևում է երկու կողմից էլ հրացանային խիստ կրակ։ Գիշերն է լինում կռիւը։ Տրաքոցների ձայնը մեզ հասնելով, կօզակները շտապեցին դէպի տեղը։ Երբ ձայները դադարում են, խաղաղութիւն է տիրում, այն ժամանակ են միայն կօզակները հասնում։ Պարզվում է, որ արտեր արածացնելու համար է կռիւ սկսվել. կան վիրաւորներ։ Դէպքի մասին կառավարութեան յայտնվեց։

Ջուլլու օյմաղը երբ Գեազանում է լինում ալխանլուեցի երեք աւազակներ յարձակվում են տաւար քշելու։ Ջուլլուեցիք նրանցից երկուսին բռնում են, իսկ երրորդը գիրք է մտնում և մօսինի շեշտակի հարուածով երկուսին սպանում է տեղնուտեղը, իսկ երկու ընկերներին ազատում ու փախչում միասին։ Այս դէպքի մասին ինձ պատմեց մի ջիւջիլմեցի թուրք։

Ամսիս 19-ին գիշերը Էլ-Եօլի ճանապարհով դէպի սար անցել են բաւականաչափ ձիաւորներ. նոյն իսկ մի ստրաժնիկ ասաց թէ. «Ночы всѣ кочевники верховые были»։

Սակայն, իրաւունք ունի քոչը գիշերը գաղտագողի անցնելու թէ ոչ, այդ մասին ոչ մի խօսք։ Պարզվեց, որ այդ ձիաւորների մեծ մասը եղել են Քարիմբայլուի և Քեւանմանմուղլուի աւազակներ, որոնք Խնձորեսկի առաջին թշնամիներն են. (1905 թ. օգոստոսի 17-ին 11 հնձողների սպանողներն են)։ Նրանք գիշերը անցնելով Ղամի գլուխ կոչված տեղում, ճանապարհի երկու կողմերում ահագին վնասներ են տուել արտերին։ Վնասը հասնում է մօտ 600 ր.։ Կառավարութիւնը խոստացել է, սովորութեան համեմատ առնել տուգանքը և վնասված մարդկանց տալ, որոնց զրկված են իրանց արտերից։

Քոչւորները վնասներ տուել և տալիս են նաև թուրքերին, որոնք մի քանի անգամ դիմել են կառավարութեան։

Ցերեկով քոչը գրեթէ անպաշտպան է անցնում. մեր տեսած նախկին հսկողութիւնը չը կայ այժմ։ Ոչխար, տաւար և ընտանիքներ անցնում են առանց պաշտպանութեան, առանց կռւող ուժի և լոկ պատանիներ և ծերունիներ են ուղեկցում քոչին։ Պարզ է մեզ համար, որ կռւող ուժերը գիշերներն են անցնում, այն էլ փառաւոր զինված։ Քանի անգամ էլ թուրքերը իրանց հայ աշնաների մօտ, այդ մասին խօսք են թռցրել, թէ կռւողները և զէնքերը ինչ կերպ են անցնում սար, այդ էլ գիտենք։

Կօզակները ասում են, թէ մեր մեծի, օֆիցերի արարքը միանգամայն զարմանալի է. իմ աչքով տեսած զէնքը մի անգամ չէ թողնում առնելու թուրքի ձեռից։ Սոյն դէպքի նման շատերն են պատահում մեզ հետ, ասում են կօզակները։

Մեր մխիթարիչը Շուշին էր, այն էլ իր մի քանի դէպքերով մեր սիրտը պղտորեց։ Գետի ակը չը պէտք է պղտորվի, ասում են գիւղացիք. պղտորվեց մեր ակը—Շուշին։

Քոչը անցնում է գեղեցիկ զինված. ոչ մի խուզարկութիւն չը կայ առ այժմ։ Ընդհանուրիս յայտնի է, որ քոչը առանց ընդհարման է սար ելնելու, իսկ թէ յետոյ ինչ կը լինի մեր օրը, այդ մասին հարցնել կարելի է նահանգապետներից և գաւառապետներից. ճիշտը նրանք գիտեն միայն։

Սաղանդարեան

ԱՐԷՇՑԻՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Մայիսի 24-ին

Արէշցին մինչև այսօր հողը չալթուկի սերմ չէ ձգել. նա ինքն էլ վարանման մէջ է. «ձեռքս բան չէ բռնում» ասում է նա, և տխուր, տրտում, անփութութեամբ հայեացքը սահեցնում է քեզ վրա. թւի թէ՝ նա ձանձրացել է կեանքից։ Խեղճ արէշցի, վեց ամսվայ չարքաշ և մուրացիկ կեանքը ինչպիսի՜ խորշոմներով է ակօսել ճակատդ և ինչպէ՜ս շուտ կորացրել է քո լայն թիկունքը….

Այսպիսի պարագաների մէջ՝ արէշցիների իրանց ծննդավայր դիմելը նրանց հոգեկան վերջին թոյլ ոյժի րօպէական կազդուրումն էր, որ գործադրեցին։ Ուրիշի տանը ապրելը, ուրիշի աչքի ու յօնքի արտայայտութիւնները նա չը կարողացաւ տանել և հոգեկան ոյժի մի բուռն ճիգ գործելով՝ դիմեց իր հողը. «մեռնում եմ, թող այնտեղ մեռնեմ» ասում էին ջահել թէ ծեր, մեծ թէ փոքր։ Յաջորդ, քահանայ և բարի իղձերով լցված անձինք խորհուրդ չը տուեցին նրանց այդ քայլն անելու, բայց ասում եմ, նրանք այդ քայլն արեցին, որովհետև աննպաստ հանգամանքները ժայռի նման ծանրացել էին նրանց այնքան թուլացած, նուազած կրծքի վրա. իսկ այսօր… այսօր էլ պրիստաւն է իր դժգոհութիւնը յայտնում և հարցնում է. «ով խորհուրդ տուեց ձեզ և ում հրաշխաւորութեամբ համարձակվեցիք այդ քայլն անել, այս աւերանոտ վայրը բերելու ձեր անպաշտպան կանանց և անմեղ մանուկներին»։

Օրէցօր տեղացող անընդհատ լուրերի շնորհիւ յուսահատ ժողովրդի սրտի փխրուն փափագները քարին զարնվող ջրի նման ցայտում, գոլորշիանում և ցրվում են օդի մէջ. նա շատ էր համարում իր կրած տանջանքները ու զրկանքները և տրտմութեան խուրձը սղմած կրծքի տախտակի տակ, նա ձայն չէ հանում և կամենում է իր քանդված օջախը դարձեալ շէնացնել. իսկ այսօր նրան այդ անելն անգամ անիրականանալի է թւում։

Քաղաքի նմանութիւնից անընդհատ աւերակների կերպարանափոխված գիւղի, ցօրենից դատարկացրած քթոցների, ծառերից մերկացրած պարտէզների, արածացրած ու փչացրած արտի, այրված ու կոտրած այգու, փլված ու աւերակ տան մօտ, աղիւսների ու քարերի վրա նա իր կնոջ հետ կանգնած լալիս է. անցկացրած ոսկէ օրերից, քրտինքով վաստակած բարիքների մէջ օրօրվելուց այսօր մուրացկանութեան հասած վիճակի վրա յորդ արցունք է թափում. Նա նախ չէր կամենում լալ, ամաչում էր իր կնոջից. զսպեց իրան, թուքը կուլ տուեց, բայց կոկորդը սղմվեց և յորդ արցունքը հոսեց աչքերից… Նա փղձկաց և արցունքը հեղեղի նման թափվեց լըցված աչքերից…։ Բայց ահա այն կողմից՝ «Է՞հ, բաւական է, էլի կը նորոգես, էլի կը շինես, ջանդ սաղ լինի, մեռնողին միայն ճար չը կայ» մխիթարում է նրան իր վշտերին կարեկից կինը և մարդը չուխայի ցնցոտիներով սրբելով աչքերը, թւի թէ մի րօպէ համոզված է իր հրեշտականման կնոջ խօսքերով, որ «մեռնելուն միայն ճար չը կայ» և յոյսի մի թոյլ նշոյլ, մի նուազ շող կամենում է նրա առաջ բանալ փայլուն ապագան։

Համոզվում է՞… և միթէ՞ այնքան դառնութիւններ ճաշակած գիւղացու համար համոզվելը այդքան դիւրին է՞։ Նա անկասկած կը համոզվէր, եթէ իր տեսածները իր խաղաղասիրաբար մտածածների հետ համերաշխ ընթանային։ Նա ինչպէ՞ս կարող է համոզվել, երբ տեսնում է, որ Աղշամ ու Մինգեչեվուր թուրք գիւղերը Հաւարիկի և Քեանդակի վարելահողերը նրանց մէջ բաժանել են իրանց կազմած սահմաններով հողակոյտեր ու խրամներ փորել։ Սա ինչպէ՞ս կարող է համոզվել, երբ տեսնում է, որ Հաւարիկի 10 տուն թուրքերը տեղափոխվելով Հաւարիկ հողի վրա, համախմբվել են աղշամեցիների հետ ի մի. և հայի տնից քանդած կղմինդրով, հայի այգուց կտրած ծառերով, հայի ձեռքով հնցած եղէգնով 10 օրվան մէջ կալուածատէրի նմանողութեամբ բնակարաններ են շինել։ Նա ինչպէ՞ս կարող է համոզվել, երբ տեսնում է դուշչիեցի թուրքը օրը կէսօրին, հայի գաւրով չաղացրած նժոյգը կապած նեմեթմապատցու այգում, տաւարը ածած խաղողի այգին՝ ցաքատը ձեռքին տաշում, կտրում, շինում է իր համար, առանց ուշք անգամ դարձնելու, որ այգի տէրը, այդ այգու համար արիւն քրտինք թափողը, ոսկոր ճաքեցնող տէրը 10 քայլ հեռուից նայում է իրան։

Ի լրումն ասածներիս՝ դառնանք իրական և եղերական փաստերին։

Այս մի քանի օրերս դուշչիեցի մի թուրք, Քեարիմ օղլին՝ իր ընկերներով, տաւարը և ձին ածած ամենօրեայ սովորութեան համեմատ տանում է Նեմեթմապատի հայերի այգին արածացնելու, և այդ ոչ թէ գաղտնի, այլ օրը կէսօրին, որովհետև նրանց կարծիքով առ այժմ հայը կարող է իրաւունքի պահանջ անել և բողոքի դիմել։ Յիշածս Քարիմ-օղլին իր երեք զինված ընկերներով տաւարները թափում է Նեմեթմապատցի Պետրոս Լալաեանի խաղողի այգին, ձին կապում է արօտից (խամից) և սկսում է ցաքատով և կացինով ծառերից կոտորել. այգու տէրը 25 ամեայ երիտասարդ տղան—Յովսէփը բահը ձեռքին այգում առու շինելիս է լինում. թուրքերը այգու տիրոջ խնդրանքներին բընաւ ուշադրութիւն չը դարձնելով, սկսում են կացնահար անել խնամքով պահված ծառերը, որի առիթով Յովսէփի և թուրքերի մէջ կռիւ է տեղի ունենում և սպանվում է Քեարիմ-օղլին։

Որ սպանութիւնը լաւ բան չէ, ամէնքս գիտենք, բայց ինչ անէր խեղճ հայը, որը ի փախուստ դառնալուց վեց ամիս յետոյ գալով գտել է իր տունը հիմնայատակ աւերակ, մարագն ու գոմը այրված, գիւղը աւերված, այգու ծառերը կոտրատված, և այդքանը բաւական չը համարելով, այսօր իր աչքի առաջ, օրը կէսօրին չորս տան տաւարը ածած իր խաղողի այգին, ծառ են կոտրում և հրացանի ոյժով հաւատ ու եկեղեցի հայհոյելով տրամադրվում են հային սպանել։

Սակայն տեսնենք թուրքերը ինչպէ՞ս են մտածում։ Նրանք իսկոյն ոտի են կանգնում, մարդիկ են ուղարկում ամենուրեք, յուզումը ընդհանրացնում են։ «Հայը մարդ է սպանել» զարմացած գոռում են նրանք։ Արէշցիների մի երկրորդ աւելի խիստ կոտորածը անխուսափելի էր, եթէ իսկոյն և եթ գաւառապետ Եկիմովը, հաշտարար միջնորդ Գորչակովը և պրիստաւ Իսմայիլ-բէգը 100 կօզակով վրա չը հասնէին և թուրք խուժանին սպառնալիքներով յետ չը դարձնէին և մտքերի յուզումը չը խաղաղեցնէին։

Նեմեթմապատի հայերը քահանայի հետ դիմել են Ղուշչի և թուրքերին խնդրել, որ այդ սպանութեան դէպքը մի փորձանք համարեն և չը վերագրեն յետին մտքով կազմած մի դաւադրութեան. թուրքերը յայտնել են. «առ այժմ ոչինչ չենք անի, բայց երբ վնասների պահանջ կը լինի, այն ժամանակ մենք ձեզ հետ դարձեալ գործ ունենք»։

Իսկ սպանող հայ տղան ժողովրդի առաջ յայտնել է պրիստաւին. «Սպանողը ես եմ. չեմ ուրանում. իմ ծառիս նրա խփած կացինը իմ աչքի մէջ կարծես դիպաւ. ես անկարող էի համբերել. և ես խելակորոյս յարձակվեցի նրա վրա. թէ ինչ եմ արել, ես սպանելուց յետոյ միայն իմացայ. խնդրում եմ իմ արձանագրութիւնը կազմեցէք շատ խիստ կերպով. թողէք ինձ տանեն Սիբիր. Նեմեթմապատի հայը ինձ համար մեռած է. ես չեմ կամենում Նեմեթմապատում ապրել, ես կամենում եմ Սիբիրում ապրել»։ Կալանաւորել են նրան։

Նոյն գիւղից մի անձն էլ գաղթել է Զաքաթալա, որովհետև նրա վրա էլ կարծիք կայ մի սպանութեան առիթով։

Ինչպէս հաշտվել այսպիսի մի հանգամանքի հետ. օրը կէսօրին 25 մազրուեցիներ սրախողող անող վարվարեցիք փամփուշտի գօտիները խաչաձև կրծքներով ձգած, մօսինի ու մաուզերի հրացանը ուսներին՝ լրբաբար նոյն Մազրուի փողոցներով վեր ու վայր են անում։ Նրանց խօսացնող չը կայ։

Ահա արէշցիների ներկայ դրութիւնը։

Սահակ քահանայ Տէր-Պօղոսեան

ՈՒ՞Ր Է ԵԼՔԸ

Այդ վերնագրով մի շատ հետաքրքիր քննական յօդուած է նուիրված «Русск. Вѣд.»-ի №132-ում Պետ. Դումայի և Գորեմիկինի մինիստրութեան միջև պատահած կօնֆլիկտին, որ տեղի ունեցաւ մայիս 13-ի նիստի ժամանակ։

Ինչպէս յայտնի է ընթերցողներին, այդ ընդհարումը մի չափազանց աննորմալ և անհասկանալի դրութիւն ստեղծեց Դումայի համար, որից դուրս գալ կարելի պիտի լինի գուցէ արեան հեղեղների միջոցով, եթէ միայն կառավարութիւնը օր առաջ պէտք եղած զիջումները չանի ժողովրդի ներկայացուցիչներին։ Ահա հէնց այդ դրութեան էութիւնն ու իմաստը, պատճառներն ու նրանից սպասվելիք հետևանքներն են քննվում վերոյիշեալ յօդուածում, որի հեղինակն է պ. Վ. Մակլակովը։

Ստորև բերում ենք այդ յօդուածի ամենաէական մասերը, որից ընթերցողները կը տեսնեն, որ յիրաւի դրութիւնը չափազանց ծանր է և պատմական մօմենտը խիստ ողբերգական։

«Մայիսի 13-ի օրը,—ասում է պ. Մակլակովը,—լրագիրներից ոմանք բիւրօկրատիայի պարտութիւնն են համարում, մի երկրորդ Ցուսիմա են անուանում։ Ճիշտ է կառավարութիւնը մի քանի ծանր րօպէներ կրեց, հրապարակապէս մերկացումներ լսելով, բայց, ցաւօք սրտի պիտի ասել, որ ոչ մի պարտութիւն չը կար և չէր էլ կարող լինել։

Եթէ մինիստրութիւնը, իր գոյութիւնը պահպանելու համար, պէտք ունենար Դումայի վրա յենվել, այդ պարագայում, իհարկէ, նրա յայտագրի հանդիպած ընդդիմութիւնը մի սոսկալի պարտութիւն պիտի լինէր։ Բայց մինիստրութիւնը Դումայի վստահութեանը չէր էլ կարօտում և չէր էլ փնտռում։ Նա ինքը առաջինը անվստահութեան քուէ տուեց Դումային։ Նրա յայտագրի երկու երրորդ մասը քննադատութիւն էր Դումայի ծրագրի. մինիստրութիւնը յայտարարից Դումային, որ նրա ծրագիրը ինքը չէ ընդունում, համարելով նրան ոչ թոյլատրելի, ապօրինի և թեթևամիտ… Կառավարութիւնը առանց տատանվելու, յայտնեց Պետական Դումային, որ ինքը նրան չէ հաւատում։

Ի՞նչ կարող էր նա սպասել, այդպիսի յայտագրով ներկայանալով։ Դուման պալատական լակէյների մի ժողով կը լինէր, եթէ դրա պատճառով նա հրաժարվէր բարձրագոյն իշխանութեանը ներկայացրած իր ծրագրից։ Դուման իր կարծիքի վրա հաստատ մնաց, և հէնց այդ պատճառով էլ նա պէտք է այս կամ այն ձևով արտայայտէր իր վերաբերմունքը դէպի մինիստրութիւնը։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, ուստի մայիսի 13-ը ոչ միայն պարտութիւն չէ կարելի համարել, այլ և նոյն իսկ կռիւ։

Եւ կռիւ չը կար էլ Դումայի նիստի ժամանակ։ Մինիստրութիւնը կարդաց իր յայտագիրը, յայտնեց իր կամքը և լռեց։ Նա ճառերի հեղեղներ լսեց, բայց իսկի չը պատասխանեց էլ։ Ոչ մի ձայն չը լսվեց մինիստրութեան ծրագրի պաշտպանութեան համար։… Կառավարութիւնը չուզեց էլ կռիւ մղել, որովհետև յաղթելու կարիք չէր զգում։

Մայիսի 13-ի իմաստը ոչ թէ նրանում է կայանում, որ երկու տարբեր ծրագիրներ իրար ընդհարվեցին, որ մինիստրական ծրագիրը դուր չեկաւ Դումային և սա դատապարտեց նրան։ Ողբերգականը նրանումն է, որ ընդհարումից յետոյ, ամեն ինչ մնում է ըստ առաջնոյն, որ այդ կօնֆլիկտը մինիստրութեան և Դումայի միջև կը մնայ իբրև մի բնական երևոյթ, շնորհիւ փետրվար 20-ի սահմանադրութեան։

Մի ահագին վիհ կայ Դումայի և կառավարութեան միջև միմեանց յարաբերութիւնները հասկանալու խնդրի վերաբերեալ։ Դուման կանգնած է պարլամենտարիզմի տեսակէտի վրա։… Պարլամենտարիզմի տեսակէտից, մինիստրութեան յայտագիրը ճիշտ որ մի աննօրինակ յանդգնութիւն է և նրա հրաժարվելը անխուսափելի։ Չէ՞ որ մինիստրութիւնն ու Դուման չեն կարող անհամաձայն լինել, նրանք միասին պէտք է կառավարեն։ Բայց Դումայի այդ տեսակէտը օրէնքի մէջ յենարան չունի։ Փետրվար 20-ի օրէնքը, որը Դումային իրաւունք է տալիս հարցադրում անել միմիայն այն մասին, թէ որ աստիճան օրինական է եղել այս կամ այն գործունէութիւնը, հիմքից ոչնչացնում է պարլամենտարիզմը։ Եւ մինիստրութիւնը զսպված ձևով հէնց մի բան ասաց։ «Մենք ձեր վստահութեանը կարիք չունենք և ձեր ծրագրով էլ չենք հետաքրքրվում։ Մենք կառավարում ենք, ոչ թէ ժողովրդի կամքով, այլ բարձրից ստացած կարգադրութիւններով, և ինչ էլ դուք այստեղ ասէք մենք պէտք է կառավարենք այնպէս, ինչպէս որ մեզ կը թելադրեն. առանց մի վայրկեան մտածելու ձեր վստահութեան մասին»։

Ողբերգականն էլ հէնց այն է,—շարունակում է պ. Մակլակովը,— որ այդ տեսակէտը իր ձևական կողմով միանգամայն օրինական է…։ Մայիսի 13-ը մեր առաջ բացեց այն հեռանկարը, թէ մեզ ինչեր են սպասում ապագայում, քանի որ գոյութիւն կունենայ փետրվարի 20-ի սահմանադրութիւնը և մինչև որ մի նոր, գուցէ և դարձեալ չափազանց ուշացած, ռեֆօրմ չը գայ այս դրութիւնը փրկելու։

Մեր պետական կեանքի հիմնական ցաւը նրանումն է, որ բիւրօկրատիան և ժողովուրդը միշտ թշնամի են եղել միմեանց։ Բիւրօկրատիան կռւում էր ժողովրդի հետ, ժողովուրդը ընդդիմադրութիւն էր ցոյց տալիս բիւրօկրատիային։ Այդ թշնամութիւնը կարմիր թելով անցնում էր մեր ամբողջ կեանքի միջով, զանազան ձևերով արտայայտվում էր ամեն տեղ։ Ուզեցին դրան վերջ դնել, բայց փետրվար 20-ի սահմանադրութիւնը այդ թշնամութիւնը աւելի կենտրոնացրեց. այդ սահմանադրութիւնը երկու կողմերին էլ մի մի կենտրոնական մարմին է յատկացնում. կառավարութիւնը դառնում է բիւրօկրատիայի օրգանը, իսկ Դուման ժողովրդի։ Նրանք չը հաշտվեցին, այլ միայն դիւրութիւն ստացան երես առ երես միմեանց ասելու այն, ինչ որ մինչև հիմա մի կողմը ասում էր լրագիրներում, իսկ միւսը իր շրջաբերականներում։ Մայիսի 13-ին, հէնց առաջին հանդիպումին, նրանք միմեանց անվստահութիւն արտայայտեցին։ Եւ չը նայելով այդ բանին, նրանց հրաւիրում են շարունակել միասին աշխատելու, և դրանց համերաշխութեան վրա պիտի հաստատվին առաջադիմութիւնն ու կարգը…։

Որտեղ կայ թշնամութիւն,—այնտեղ էլ կռիւ կը լինի։ Մինչդեռ մեր օրէնքը ճանապարհներ չէ տալիս այդ կռւից դուրս գալու համար։ Նա նախատեսել է Պետական Խորհրդի և Դումայի միջև ծագելիք անհամաձայնութիւնները, բայց մինիստրութեան և Դումայի միջև ծագելիք ընդհարումները սահմանադրութիւնը չէ նախատեսել։ Այդ պատճառով էլ կռիւը կընթանայ ոչ սահմանադրական ճանապարհով։ Եւ առաջին քայլերը արդէն արված են։ Պատգամաւորները կօնֆլիկտի մասին հեռագրեցին իրանց տեղերը. Գորեմիկինը պատերին կըպցրեց իր յայտագիրը։ Թշնամութեան ալիքը պատգամաւորների հայրենիքից ծփաց մինչև կենտրոն և այստեղից էլ կրկին յորձանք տուեց դէպի իրանց տեղերը։ Դումայի գումարումը պէտք է հանգստացնէր երկիրը, բայց դրա փոխարէն Դուման խլրտումների պատճառ է հանդիսանում։ Երկիրը ստիպված է քաղաքականութիւնը որոշել ոչ թէ ընտրութիւններով, այլ ամենօրեայ, ոչ-սահմանադրական միջամտութիւններով։ Ի պատասխան ընդհարումի, արդէն ահագին քանակութեամբ շնորհաւորութիւններ թափվեցին Դումա, խոստանալով նեցուկ լինել և օգնութեան հասնել նրան։ Մի աւելորդ անգամ կառավարութիւնը ինքն է ստեղծում այնպիսի մի դրութիւն, որի դէմ ինքը ցանկանում էր կռւել. նա մինչև խորքը ալեկոծում է երկիրը, մղելով նրան ոչ սահմանադրական, ուրեմն և, թէև խաղաղ, բայց և այնպէս յեղափոխական միջոցների։

Դա և մի այլ հետևանք կունենայ. դա կը խախտի միապետութեան սկզբունքը։ Միապետութիւնը ուժեղ է ինքնակալութեան մէջ, ուր չը կան քաղաքացիներ, այլ հպատակներ միայն, որոնք խոնարհվել գիտեն, և ուր քաղաքական կեանքին մասնակցել քրէական յանցանք է համարվում։ Միապետութիւնը ուժեղ է և պարլամենտական այնպիսի կարգերի մէջ, ուր միապետը, ազգային միութեան այդ նշանակը (символь), ժողովրդի պատւաւոր նախագահը, կուսակցութիւններից բարձր է կանգնած, քաղաքական ընդհարումներից դուրս է գտնվում, անաչառ կերպով կանոնաւորելով սահմանադրական մեքենայի աշխատութիւններ։ Այդպիսի կարգեր եղած ժամանակ այն ակսիօման, թէ՝ the King can not be wrong (թագաւորը չէ կարող սխալվել)—ֆիկցիա չէ, այլ ժողովրդի զգացմունքի մի անկեղծ արտայայտութիւն։

Բոլորովին այլ բան է այնպիսի սահմանադրական սիստեմի ժամանակ, երբ մինիստրութիւնը գործում է բարձրից եկած կարգադրութիւնների համաձայն, երբ նա ոչ ժողովրդի վստահութեան վրա է յենվում, այլ միայն միապետի վստահութեան վրա։ Որչափ էլ աշխատեն այդ դէպքում միապետի անձնաւորութիւնը վարպետութեամբ հեռու պահել կուսակցութիւնների ընդհարումներից, բոլորի համար էլ պարզ է, որ դա միմիայն ֆիկցիա կը լինի։ Այդպէս պատահեց և մայիսի 13-ին։ Եթէ Գորեմիկինը Դումայի վստահութիւնը չէր փնտռում, ում վրա էր ուրեմն նա յենվում, ում անունից էր նա խօսում։ Ո՞ւմ ծրագիրը համակրութիւն չը գտաւ Դումայում, ումն էր վերաբերվում սրա մասին եղած անվստահութեան քուէն։ Եւ երբ, «Моск. Вѣд.» թերթը իր մայիսի 16-ի համարում գովաբանում է Գորեմիկինին այն բանի համար, թէ սա ամբողջ պատասխանատւութիւնը իր վրա վերցրեց, «Թագաւոր Կայսրի անձնաւորութիւնը անձեռնմխելի թողնելով», չափազանց սխալվում է։ Միապետի անձնաւորութիւնը ծածկողը ամենևին դէպս Գորեմիկինը չէր։ Մինչդեռ միապետութեան ամբողջ ոյժը հէնց նրանումն է կայանում, որ միապետը կուսակցութիւններից, կռիւներից և յարձակումներից դուրս պէտք է լինի։ Առանց դրան միապետութեան սկզբունքը սուտ է»։

Այս լուրջ քննական հայեացքներից յետոյ, պ. Վ. Մակլակովը հետևեալ տողերով է վերջացնում իր իմաստալից յօդուածը.—

«Եւ մայիս 13-ի օրը վերին աստիճանի խրատական է. նա ցոյց տուեց, որ մեր սահմանադրական մեքենան այս ձևով չէ կարող աշխատել. նա կարգ չէ ստեղծում, այլ յեղափոխականացնում է երկիրը և վարկաբեկում է միապետութեան սկզբունքը։ Նախկին տեղում մենք չենք կարող մնալ։ Եթէ կարող էք, վարվեցէք «Моск. Вѣд.»-ի դեղատոմսի համաձայն. վերադարձէք յետ, հրատարակեցէք զինւորական դիկտատուրա, վերականգնեցէք ինքնակալութիւնը իր ամբողջ անխնայութեամբ։ Դա տրամաբանական կը լինի։ Բայց եթէ ձեզ համար էլ արդէն պարզ է, որ դա այլևս չէ կարելի, որ արդէն հասունացած է ժամանակը, այդ պարագայում անցէք սահմանադրական կարգերին, ուր բիւրօկրատիան իր իսկական, գործադիր իշխանութեան տեղը կը բռնէ։ Մի բան միայն մի արէք, մի կանգնէք այնպիսի դիրքի վրա, որը անիշխանութիւն է առաջացնում, որը գրգռում է բոլորին—թէ աջակողմեաններին և թէ ձախակողմեաններին, և յիշեցէք, որ յապաղումի ամեն մի օրը դէպի կործանում է տանում երկիրը»։

Պիտի լսէ՞, պիտի ըմբռնէ՞ արդեօք բիւրօկրատիան վերջապէս, թէ ո՞րպիսի անդունդի եզերքում են կանգնած թէ ինքը և թէ չարատանջ ժողովուրդը…

Ռ.

ՄՈՌԱՑՒԱԾ ԱՆԿԻՒՆՆԵՐ

I

Բերքերով հարուստ ու փարթամ Երևանեան նահանգը իր սահմանների մէջ պարփակում է գաւառներ ու գաւառամասեր զուրկ հարուստ բուսականութիւնից, արդիւնաբերութիւնից, անհիւրընկալ, նոյն իսկ ամայի, որոնք իրանց տասնեակ հազարաւոր ազգաբնակութեամբ, ենթակայ բնութեան անողոք հարուածներին անուշադիր են մնացել շահագործող աշխարհի ուշադրութիւնից և այսօր ներկայացնում են մի մի անկիւններ մոռացված, անուշադրութեան մատնված, տգիտութեան, խաւարի ու թշուառութիւնների մէջ թաղված։

Այդպիսի մոռացված անկիւններից մէկն է Դարաչիչակի շրջանը, որի մասին կուզէինք տալ մի շարք տեղեկութիւններ, գլխաւորապէս ժողովրդի տնտեսական կեանքին վերաբերող։

Երբ որ լսում կամ կարդում ենք Երևանեան նահանգի մասին, մի րօպէ պատկերանում է մեզ արգաւանդ դաշտավայր, տաք կլիմայ, առատ ջուր, հարուստ կուլտուրա բամբակի, բրնձի, խաղողի մշակութեամբ, պտղատու պարտէզներ իրանց հրաշալի մրգերով, որ զարմանք կարող են պատճառել եւրօպացուն. մի րօպէ պատկերանում է մեզ մի ամբողջ ընդարձակ նահանգ, ուր բնութիւնը ոչինչ չէ խնայել առատօրէն տալու հարիւր հազարաւոր ազգաբնակութեանը այն բոլորն, ինչ որ պէտք է լաւ ապրելու համար։ Բայց այդպէս չէ՛, երբ մօտից ծանօթանում էք այդ նահանգի հետ, ապա էք գտնում մի քանի գաւառները և անձամբ հետաքրքրվում էք նրա վիճակով։ Ձեզ պատկերանում է մի այլ աշխարհ, մի այլ կուլտուրա, մի այլ կեանք, հակապատկեր այն բոլորին, ինչ որ սպասում էիք։ Արգաւանդ դաշտավայրի փոխարէն լեռների ձորերի, կուտակումներ իրանց ժեռուտներով ու չնգլներով. տեղ տեղ նաև ձինի շաղփաներով, փարթամ բուսականութեան փոխարէն նօսր կաղնի, նորածիլ արտեր, ուր գիւղային շատ տեղերում նոյնիսկ ցանքը նոր է վերջացնում, ժայռերես, առոյգ գիւղացու փոխարէն մի թախիծ—մի դալուկ, յուսահատ պատկեր, որի վրա դրոշմված է և կարիքը և չքաւորութիւնը և ամէն բան—մի խօսքով, այն բոլորը ինչ որ ծնունդ է առնում ծանր զրկանքներից։

Եւ այդպէս էլ է։ Մի կողմ թողէք Երեւանեան նահանգի երեք դաշտավայրերը—Արաքսի, Արփաչայի և Նախիջեան գետի հովիտները—որոնք իսկապէս կազմում են նահանգի հարստութիւնը և գանձը—ահագին տարածութիւններ—լեռնագօտիներ ու շղթաներ, անթիւ սարահարթեր ներկայացնում են մշակութեան միանգամայն անձեռնտու շրջաններ, ուր ժողովուրդը տաժանակիր աշխատանք կրելով, այնուամենայնիւ ենթակայ է անվերջ զրկանքների ու չքաւորութեան։ Այդ շրջանները, որպէս լաւ արօտատեղիներ, կարող էին նպաստել խաշնարածութեան և հովուական կեանքին, ինչպէս այդ տեսնում ենք քիւրդ և թարաքեամա թափառական ցեղերի նկատմամբ, որոնք յաճախ հարիւրաւոր վերստեր անցնելով և գաւառներ ոտի տակ տալով գալիս չւում են իրանց հօտերով ապրուստ հայթայթելու, բայց մի ժողովուրդ, որը վաղուց թողել է խաշնարածական-թափառական կեանքը և ձգտում է դէպի առաջ—դէպի կուլտուրա, անարդար էլ կը լինէր նրան հարկադրել յարմարվել իր շրջապատող բնութեան պատճառներին, թէև մի ժողովուրդ, որը արդէն ոտք է դրել կուլտուրական ճանապարհի վրա, ինչ արհեստական միջոց էլ որ ձեռք առնելու լինէք, նա չէ կարող նորից յետ դառնալ դէպի նախնական կեանքը։ Այս հանգամանքին էլ պիտի վերագրել այն հոսանքը, որը այժմ սկսված է մեր կուլտուրայով աղքատ-լեռնոտ գաւառներից դէպի արդիւնաբերական կենտրոնները—դէպի Բագու, Թիֆլիս, Բաթում, որը կը տեսնենք իր տեղում։

Այսպէս է ընդհանուր պատկերը Երեւանեան նահանգի լեռնոտ մասերի, առանձնապէս Դարալագեազի, Աբարանի, Նոր-Բայազէտի և Դարաչիչակի գաւառամասերի, որոնց ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է այն տեսակէտից, որ որքան էլ կուլտուրան դէպի իրան քաշէ բնակչութեամբ աղքատ այդ շրջանների ազգաբնակութիւնը, բայց տեղում կը մնայ մասսան, որի կեանքը կարելի է բարւոքել մի շարք բարելաւումներով, նրա թէև կլիմայական աննպաստ պայմաններում գտնվող, մշակութեան և մի շարք այլ տնտեսական պարապմունքների մէջ։

Ահա այս տեսակէտից, մենք կը փորձենք տալ Դարաչիչակի գաւառամասի մեր տպաւորութիւնները։

Օնիկ

Ներքին Ախտա 22 մայիսի

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԱՄԲԻՈՆՆԵՐ

Հնդկաստանի Բոմբէ քաղաքի Փարսի (հին պարսկերէն) Ակադեմիայի վարչական խորհուրդը՝ դոկտ. Թիրեաքեան խանի առաջարկութեան համաձայն վճռել է ուսուցման մի բեմ հիմնել հայերէն լեզուի համար։ Հայերէնի ծանօթութիւնը պահլաւ և փարսի բնագրերի ճշգրիտ թարգմանութեան համար անհրաժեշտ է, ինչպէս անհրաժեշտ են, պահլաւերէնն ու պարսկերէնը այն հայագէտների համար, որոնք զբաղվում են հայ բանասիրութեամբ, մեր հին մատենագրերի, օրինակ, Խորենացու, բազմաթիւ էական ու մութ կէտերի լուսաբանութեան հարցերով։ Դոկտ. Թիրեաքեան արել է այդ առաջարկութիւնը, որովհետեւ նա բաւական լուրջ կերպով զբաղվել է մեր հին մատենագիրների ուսումնասիրութեամբ և այդ աշխատութեան ընթացքում կշռել է այն ահագին օժանդակութիւնը, որ մատուցանում են պահլաւերէն ու փարսերէնը։

Երբ այս երկու լեզուները ունեցել են իրանց ազդեցութիւնը մեր գրաբարի վրա, բնական է, որ մեր գրաբարն էլ որոշ չափով ազդած լինի միւսների վրա։ Այնպէս որ ուրախալի և շնորհաւորելի է Փարսի Ակադեմիայի կայացրած վճիռը։

Մինչդեռ մի կողմից հայերէնի մի ամբիոն է հաստատվում Հնդկաստանում, միւս կողմից շատ հաւանականաբար փակվի շուտով այն բեմը, որ յատկացրված էր հայերէնի, Պարիզի Արեւելեան կենդանի լեզուների ուսումնարանում։ Եւ այդ այն պատճառով, որ ուսանող չը կայ։

Ինչպէս յայտնի է, հայերէնի առաջին դասը հիմնված էր այդ դպրոցում 1798-ին, Շահան Ջրպետի կողմից, որից յետոյ հայերէնը շարունակել են ուսուցանել նոյն բեմից Լըվայեան դը Ֆլօրիվալ, Դիւլօրիէ, Կարրիէր և Մէյէ, վերջին պրօֆեսորը։

Այդ դպրոցումն են ուսել Սէն Մարտէն, Բրոսսէ, Լանգլուա, Բօրէ, Պրիւդոմ և Կատերեա ծանօթ հայագէտները։

Ֆրանսիական կառավարութիւնը աւելի առաջ տրամադիր է եղել վերացնել հայերէնի ամբիոնը, ուսանողների չգոյութեան պատճառով, բայց մի քանի հայեր՝ դասախօսութեան խափանման արգելք լինելու համար, աշակերտ էին գրվել։

Ուսանողների պակասը, ի միջի այլոց բացատրվում է և հետեւեալ պատճառով։ Համալսարանի ուսանողները, երբ դեռ ևս զինուորական ծառայութիւնը երկու տարվայ չէր իջեցրած, ազատ էին համարվում այդ ծառայութիւնից։ Արեւելեան կենդանի լեզուների ուսանողները հաշւում էին նոյն թւից։ Բայց երբ երկու տարվայ ծառայութեան օրէնքն ընդունվեց և ամէն ֆրանսիացի, ինչ ասպարէզի և ինչ դասի էլ պատկանելիս լինի, պարտաւորվեց զինուորական ծառայութիւնը կատարել, Արեւելեան կենդանի լեզուների դասընթացքը դադարեց իրան գրաւելուց զինուորական ծառայութիւնից զերծանելու ձգտում ունեցող ուսանողներից շատերին։

Ահա ինչու հայերէնի բեմը, Պարիզում, մօտ է մեռնելու։

ՄԷՇՉԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

Մայիսի 27-ին կայացաւ Թիֆլիսի մէշչանինների լիազօրների ընդհանուր ժողովը մասնակցութեամբ 58 անդամների։

Ժողովին առաջարկված հարցերից ժողովն զբաղվեց միայն մի հարցով, այն էլ վերջնականապէս վճիռ չը կայացնելով նրա մասին։ Այդ մէշչանինների աւագի և նրան ռոճիկ նշանակելու հարցն էր։ Ամբողջ խօսակցութիւնը նրա մասին էր, թէ այդ հարցը երկուսի է բաժանվում, և ինչպէս որոշումները կայացնել. քննել նախ ռոճիկի, խնդիրը թէ աւագի ընտրութիւնը։

Այս հարցը այնքան ծամծմվեց, որ ճիշտ նմանվեց այն հարցին, թէ ինչն է առաջ եղել՝ ձուն, թէ հաւը։

Որպէսզի այդ գորդեան հանգոյցը միանգամից վճռվի և վճռվի այնպէս, որ կուսակցութիւնները գոհ մնան, որոշվեց այդ երկու հարցերը միաժամանակ քուէարկել։

Աւագի համար թեկնածու էր նշանակված պ. Ս. Դանդուրեանը այժմեան մէշչանինների աւագի տեղապահը։ Ժողովականներից մի մասը գոհ լինելով նրա գործունէութիւնից կամենում էր նրան ռոճիկ նշանակել 3000 ր. տարեկան, իսկ միւս մասը պատճառաբանելով, թէ վարչութեան միջոցները չեն ներում, առաջարկում էր 2000 և նոյն իսկ աւելի պակաս ռոճիկ։ Ի վերջոյ վճռվեց քուէարկել այդ երկու թիւը։ Քուէարկութեան հետեւանքը եղաւ այն, որ պ. Դանդուրեանը 37 ձայնով ընդդէմ 21-ի ընտրվեց մէշչանինների աւագ. իսկ ռոճիկներից ոչ մէկը ձայների մեծամասնութիւն չունենալով, չը հաստատվեց։

Եւ այդպէս պարզվեց, որ մօտ 80,000 Թիֆլիսի մէշչանինները անկարող են մի համալսարանաւարտ աւագի, նոյնիսկ 2000 րուբլի ռոճիկ տալ, այսինքն մի մարդու, որ կարողացաւ մէշչանինների Աւգեան ախոռից բարձրացնել իր այժմեան պատշաճաւոր դրութեան, կարգ ու կանոն մտցնել այդ հիմնարկութեան մէջ, արտաքսել ամէն տեսակ անկարգ գործողութիւններ այդ հիմնարկութիւնից։

Սակայն մեզ թւում է, որ այստեղ ուրիշ բան է դեր խաղում և ոչ լոկ այն որ մէշչանինների հասարակութիւնը անկարող է վարձատրել երկու կամ երեք հազար րուբլի։ Բայց այդ մասին ուրիշ անգամ։

Քուէարկութիւնից յետոյ, ժողովը մի ամբողջ ժամ էլ զբաղվեց ռոճիկի հարցով և վերջապէս անկարող լինելով գալ մի վերջնական եզրակացութեան, յետաձգեց նրա քննութիւնը մի այլ անգամ։

Գ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Կիրակի, մայիսի 28-ին, Թիֆլիսի ձմերային ժողովարանում դերասանների և սիրողների խումբը ներկայացրեց «Ինչ կը ցանես այն կը հնձես» և «Բելեխ թէ հարսանիք» կատակերգութիւնները։

Դերասաններից մասնակցում էին Գ. Միրաղեան և Տ. Վարդուհի, որոնք տիպիկ էին իրանց դերերում։ Սիրողներն էլ աշխատել էին իրանց դերերի վրա և մեծ կարօտութիւն չէին զգում յուշարարի։

Ներկայացման հաւաքվել էր բաւ մեծ մասին երիտասարդութիւն։ Երեկոյթը անցաւ զուարթ և աշխոյժ։

II

Շաբաթ, մայիսի 27-ին, սիրողների խումբը մասնակցութեամբ դեր. պ. Անդրանիկի և տ. Ազնիւի, ներկայացրեց առաջին անգամ «Երկու յիսնապետ» դրաման 3 գործ. թարգմ. Դօշյեանի։

Պիէսը շատ հին է. նա խաղացվել է դեռ Մնակեանի ժամանակ։ Երկու յիսնապետ Գուլիէլմ և Ռօբերտ կարանտինայի օրէնքը խախտած լինելով, զինուորական դատարանի վճռով սկզբում երկուսն էլ մահվան են դատապարտվում. բայց յետոյ վճռվում է կեանքից զրկել միայն մէկին։ Վիճակը ընկնում է Գուլիէլմին, որ կնոջ և 2 մանր զաւակների հայր է և որոնց 5 ամբողջ տարի չէ տեսել։ Ընկեր Ռօբերտ՝ դրդված անձնուիրութիւնից, համաձայնվում է, որ Գուլիէլմը գնայ վերջին անգամ տեսնէ իր սիրելիներին, և նրա որոշեալ ժամին չը հասնելու դէպքում, ինքը պատիժը կրէ։ Զինուորական իշխանութեան ներկայացուցիչ ադիւտանտը թշնամի է Ռօբերտին. նա դաւ է լարում, որպէս զի Գուլիէլմը ժամանակին չը հասնէ և նրա տեղ պատժվի Ռօբերտը։ Բայց Գուլիէլմը հակառակ ամէն արգելքների, նոյն իսկ լողալով ծովից, հասնում է ժամանակին։

Ադիւտանտի դաւը բացվում է և փոխանակ երկու յիսնապետների պատժվում է նա։

Պիէսան մի մելօդրամա է, ունի շատ հետաքրքիր տեսարաններ, ինչպէս առհասարակ ամէն մելօդրամա։

Ամփոփ ասած՝ անձնազոհ ընկերասիրութեան և ճշմարտութեան վերջնական յաղթանակի մի դէպք է նկարագրած վերոյիշեալ դրամայի մէջ։

Թարգմանութիւնը սահուն է, առանց խճողված բառակուտակումների։

Դերակատարները լաւ տարան իրանց դերերը։

Ե.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 27-ին

Առաջիկայ յունիսի 4-ի առաւօտեան 10-րդ ժամին նշանակված է Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի տասներկու հոգաբարձուների և հոգաբարձական խորհրդի պաշտօնավարութեան ժամանակամիջոցի համար մի ստուգող յանձնաժողովի ընտրութիւն։ Թեմական ընտրողները հրաւիրված են յունիսի 3-ի երեկոյեան 8-րդ ժամին առաջնորդարան նախապատրաստական ժողովի. իսկ 4-ի առաւօտեան 10-րդ ժամին ընտրելու հոգաբարձուներ և ստուգող յանձնաժողովի անդամներ։ Թեմական ընտրողների և նրանց անձնափոխանորդների անուանական ցուցակը ներկայումս ուղարկելով խմբագրութեանդ, խնդրում եմ կարգադրել առաջիկայ համարում տպագրելու։

Առաջնորդ Թեմի
Գարեգին արքեպիսկոպոս

Թիֆլիս քաղաք
1) Ջգրաշէն ս. Աւետեաց եկեղեցի
1 Համազասպ Օհանջանեան
2. Աւետիք Ահարոնեան
Անձնափոխանորդներ
Արշակ քահանայ Մինասեան
Խունունց
2) Վանից աւագ եկեղեցի
3. Տիգրան Յովհաննիսեան
4. Նազարէթ Տիգրանեան
Անձնափոխանորդներ
Սիմէօն Շահվերդեան
Միքայէլ Մուշայեանց
3) Ջորաբաշի ս. Գէորգ եկեղեցի
5. Միքայէլ Յովհաննիսեան
6. Յովհաննէս Տէր-Սարգսեան
Անձնափոխանորդներ
Ստեփան Դանդուրեան
Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի
4) Լուսաւորիչ եկեղեցի
7. Գէորգ Ալլահվերդեան
8. Աղասի Մելիք-Այվազեան
Անձնափոխանորդներ
Կարապետ Վերդեան
Գէորգ Բարուրեան
5) Բեթղեհէմի
9. Բժ. Բագրատ Նաւասարդեան
10. Բժ. Ն. Ումրիկեան
Անձնափոխանորդներ
Յակովբ Ղազարեան
Ա. Օրբէլի
6) Ս. Մինաս եկեղեցի
11. Բժ. Յովհաննէս Իգիթեանց
12. Գրիգոր Սարեանց
Անձնափոխանորդներ
Ստեփան Մալխասեան
Գէորգ Տէր-Դաւթեան
7) Քարափի ս. Յակովբ եկեղեցի
13. Անտօն Մովսէսեան
14. Առաքել Աւագեան
Անձնափոխանորդներ
Գէորգ Սարաջեան
Կարապետ Աւագեան
8) Ս. Սարգսի վանք
15. Մատթէոս Ղուկասեան
16. Յարութիւն Ղուկասեան
Անձնափոխանորդներ
Գէորգ Աղնանեան
Մկրտիչ Դուլեան
9) Ս. Աստուածածին եկեղեցի
17. Արշակ Բարխուդարեան
18. Ստեփաննոս Մնացականեան
Անձնափոխանորդներ
Արտէմ Շաւմիչենեան
Սիմէօն Տէրտէրեան
10) Կուկիայի ս. Աստուածածին Թանդոյեանց եկեղեցի
19. Արշակ Մեհրաբեան
20. Խաչատուր Տէր-Մարգարեան
Անձնափոխանորդներ
Մարտիրոս Սիւաչեան
Յովհաննէս Յովսէփեան
11. Վերայի ս. Խաչ եկեղեցի
21. Ստեփան Խաչիկեան
22. Աստուածատուր Երիցեան
Անձնափոխանորդներ
Գ. Նալբանդեան
Ս. Տէր-Գրիգորեան
12) Կուկիայի Նորաշէն
23. Ալեքսանդր Քալանթար
24. Գալուստ Ճոնեանց
Անձնափոխանորդներ
Գրիգոր քահանայ Շահնազարեան
Ճարտարապետ Նիկողայոս Գրիգորեան
13) Տափի թաղի Քամոյեանց ս. Գէորգ եկեղեցի
25. Ղազարոս Աղայեան
26. Գարեգին Խաժակ
Անձնափոխանորդներ
Ալեքսանդր Մելիք-Ազարեանց
Աւետիք Սահակեան
14) Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցի Մէյդանի
27. Յովսէփ Ամիրխանեան
28. Եղիշէ Թոփչեան
Անձնափոխանորդներ
Արտաշէս Աբեղեան
Տիգրան Շիշմանեան
15) ս. Գէորգ եկեղեցի Մողնու
29. Ստեփան Լիսիցեան
30 Բժ. Տիգրան Թաղէոսեան
Անձնափոխանորդներ
Սիմէօն Շխեանց
Պետրոս Քալանթարեան
16) Հրեշտակապետաց եկեղեցի
31. Աբրահամ Թաշճեան
32. Յովհաննէս Դանիէլեան
Անձնափոխանորդներ
Տէր-Բարգէն քահանայ
Կարապետ Բաբայեանց
17) ս. Աստուածածին եկեղ. Զուղուրէթի
33. Բժ. Բեսարիօն Պապովեանց
34. Յովսէփ Բարայեանց
Անձնափոխանորդներ
Յարութիւն Դանիէլեանց
Մարտիրոս Գրիգորեանց
18) Ջրկինեանց եկեղեցի
35. Արսէն Տէր-Գրիգորեանց
36. Միքայէլ Աթաբէգեան
Անձնափոխանորդներ
Բագրատ Շաղինեանց
Բժ. Ալեքսանդր Ղազարեանց
19) Նաւթլուղի եկեղեցի
37. Յովհաննէս Գուրգէնբէկեանց
38. Բժ. Գրիգոր Տէր-Գրիգորեանց
Անձնափոխանորդներ
Դարչօ Դաւթեանց
Յովհաննէս Գալստեանց
20) ս. Կարապետ եկեղ. Հաւլաբարի
39. Խաչիկ Ստեփաննոսեան Սամուէլեանց
40. Գրիգոր Աւետիքեան Արիստակէսեանց
Անձնափոխանորդներ
Խաչատուր Մելքոնեան Խաչատրեանց
Բագրատ Աբրահամեան Յարութիւնեանց
21) Շամքոռեցւոց եկեղեցի Հաւլաբարի
41. Արշակ Ղոնդախսազեանց
42. Հայկ Տէր-Խաչատրեան
Անձնափոխանորդներ
Ստեփաննոս Մազմանեան
Գարեգին Տէր-Յովհաննիսեան
22) Էջմիածնեցւոց ս. Գէորգ եկ. Հաւլաբարի
43. Սարգիս Մանասեան
44. Սարգիս Եղիգարեան
Անձնափոխանորդներ
Ղեւոնդ քահանայ Մամիկոնեանց
Սիմէօն Մատինեանց
23) ս. Նշան եկեղեցի
45. Սարգիս Ծատուրեանց
46. Գէորգ Տէր-Զանեանց
Անձնափոխանորդներ
Գէորգ Վարդանեանց
Անդրանիկ Պոյեաճեանց
1) Ախալցխա
1. Յովակիմ Եսղեանց
2. Խորէն Ճարպկեանց,
3. Մարտիրոս Ինճիկեանց
4. Յակովբ Մուրադեանց
Անձնափոխանորդներ.
Կարապետ Գրիգորեան
Արտաշէս Անխօնեան
Աւետիս Ասլանեան
Ալեքսանդր Այվազեան։
2) Թիֆլիսի գաւառի գործակալութեան կողմից
5. Ստեփան Աշոտեան Ղազազեանց
Անձնափոխանորդ
Յարութիւն Մովսեսեան
3) Շուլաւէրի գործակալութեան կողմից
6. Վախտանգ Մկրտչեան Մեհրաբեանց
Անձնափոխանորդ
Լեւոն Վարդանեան Մելիք-Ադամեանց
4) Ղազախի բ. մ. գործակալութեան կողմից
7. Ալեքսանդր Միքայէլեան Յակովբեանց
Անձնափոխանորդ
Արշակ Տէր-Խաչատրեան
5) Բաթում
8. Հայկ Սողոմոնեան
Անձնափոխանորդ
[illegible] Յարութիւնեան
6) Ղազախի ա. մ. գործակալութեան կողմից
9. Սամսոն Յարութիւնեան
Անձնափոխանորդ
Յարութիւն քահանայ Ճուղուրեանց
7) Արդուինի քաղաքի ս. Աստուածածին եկեղեցւոյ կողմից
10. Լիպարիտ Նազարեան
Անձնափոխանորդ
Պօղոս Մարգարեան
8) Արդուինի գործակալութեան կողմից
11. Պետրոս Պօղոսեան Տէր-Յարութիւնեանց
Անձնափոխանորդ
Կարապետ Աղնաւուրեանց
9) Շուխիդիսի գործակալութեան կողմից
12. Սարգիս քահանայ Շիրոյեանց
Անձնափոխանորդ
Աղալոյ Ղարախանեանց
10) Ախալքալաք քաղաքի ս. Խաչ եկեղեցւոյ կողմից
13. Սեդրաք Պօղոսեան Մատանճեանց
Անձնափոխանորդ
Վարդան Գասպարեան Շահպարոնեանց
Ախալքալաքի ա. մ. գործակալութիւնից
14. Յարութիւն քահանայ Աղնաւուրեանց
Անձնափոխանորդ
Ղեւոնդ քահանայ Վարդապետեան
Ախալքալաքի բ. մ. գործակալութիւնից
15. Մինաս Խորշիկեանց
Անձնափոխանորդ
Սանդրիկ Սաղոյեանց
Ծալկայի գործակալութիւնից
16, Խորէն քահանայ Պալուտեանց
Անձնափոխանորդ
Անտօն Անտօնեանց
11) Սղնախի ս. Կարապետ եկեղեցւոյ կողմից
17. Վարդան Յովհաննիսեան Նիկոլոզեանց
Անձնափոխանորդ
Սարգիս Էմմանուէլեան Տէր-Գրիգորեանց
12) Սղնախի ս. Գէորգ եկեղեցւոյ կողմից
18. Յարութիւն քահ. Տէր-Նիկողայոսեանց
Անձնափոխանորդ
Վարդան Տէր-Յակովբեանց
13) Սղնախ ս. Սարգիս եկեղեցի
19. Սարգիս Յարութիւնեան Յակովբեանց
Անձնափոխանորդ
Սարգիս Յովհաննիսեան Մուրվալեանց
14) ս. Յովհաննէս եկեղ. Գանձակի
20. Սամուէլ Բալաղեան
Անձնափոխանորդ
Ստեփան Տէր-Աւետիքեանց
ս. Լուսաւորիչ եկեղ. Գանձակի
21. Սիմէօն Սարգսեան Աֆանասեանց
Անձնափոխանորդ
Բժշկ. Սամուէլ Պօղոսեան Շահպարոնեան
ս. Գէորգ եկեղեցի Գանձակի
22. Կորիւն վարդապետ
Անձնափոխանորդ
Նիկողայոս Մամիկոնեան
ս. Աստուածածին եկեղ. Գանձակի
23. Պօղոս Օհանջանեանց
Անձնափոխանորդ
Լեւոն Աւալեանց
Գանձակի բ. մ. գործակալութեան կողմից
24. Յովհաննէս քահանայ Խօջայեանց
Անձնափոխանորդ
Գրիգոր քահ. Մանասեան
Գանձակի ա. մ. գործակալութեան կողմից
25. Անանիա քահանայ Շիրակունի
Անձնափոխանորդ
Ալեքսանդր Մամիկոնեան
15) Փօթի քաղաքի
26. Անդրէաս Ստեփանեան Ապրեկեանց
Անձնափոխանորդ
Բիւզանդ Գասպարեան
16) Շամշադինի գործակալութիւնից
27. Մարկոս Մուրադեանց
Անձնափոխանորդ
Սերովբէ Փայտեանց
Գորի քաղաք
ս. Աստուածածին եկեղեցի
28. Ճարտարապ. Միքայէլ Յովհ. Օզանէզով
Անձնափոխանորդ
Ալեքսանդր Գրիգորեան Դաւթեանց
Հնաշէն ս. Ստեփաննոս եկեղեցի
29. Բժ. Զաքարիա Յովհ. Տէր-Մինասեանց
Անձնափոխանորդ
Ստեփաննոս Զաքարեան Բեգալեանց
Քարաշէն ս. Ստեփաննոս եկեղեցի
30. Բժ. Ալեքսանդր Յակովբ. Մամինեանց
Անձնափոխանորդ
Բարսեղ Յակովբեան Կորխմազեանց
Գորու Ախալքալաքի գործակալութ. կողմից
31. Սողոմոն Գէորգեան Նազարեանց
Անձնափոխանորդ
Նիկողայոս Սիմօնեան Առաքելեանց
Քութայիսի գործակալութիւնից
32. Նիկողայոս Ալեքսանդրեան Կաճկաճեանց
Անձնափոխանորդ
Մկրտիչ քահանայ Տիրացեան
Քութայիսի եկեղեցւոյ կողմից
33. Յովսէփ աւագ քահանայ Ամիրաղեանց
Անձնափոխանորդ
Ուսուցիչ Ղազարոս Բագարեանց
Սուխում քաղաք
34. Միքայէլ Վարդանեան Պուչեանց
Անձնափոխանորդ
Վերիճեան Ծատուրեանց
Սուրամի գործակալութիւնից
35. Յովհաննէս Տէր-Յովսէփեան Աուիծեանց
Անձնափոխանորդ
Բարսեղ Գրիգորեան Զօրէքեանց
Զաքաթալա
36. Աղաջան Վարդազարեան Տէր-Սահակեանց
Անձնափոխանորդ
Յ. Յարութիւնեանց
Ցխինվալի գործակալութեան
37. Բարսեղ Բէժանեան Շերմազանեանց
Անձնափոխանորդ
Աղամ Մովսեսեան Շահպարոնեանց
Թելաւի գործակալութիւնից
38. Աբէլ աւագ քահանայ Սուքիասեանց
Անձնափոխանորդ
Արտէմ Տէր-Բարսեղեան
Թելաւի եկեղեցիներ
Ս. Աստուածածին եկեղեցի
39. Գրիգոր Եագորեան Գէորգեանց
Անձնափոխանորդ
Եգոր Եագորեանց
Զուել Գալաւանի եկեղեցի
40. Պետրոս Ալեքսանդրեան Ելաղեանց
Անձնափոխանորդ
Սարգիս Գէորգեան Դէմուրեանց
Ս. Գէորգ աւագ եկեղեցի
41. Յովհաննէս Առաքելեան Սաղաթելեանց
Անձնափոխանորդ
Գարեգին Յովսէփեան Տէր-Յարութիւնեանց
Ախալցխայի գործակալութեան կողմից
42. Դիոնեսիոս Մանուկեան
Անձնափոխանորդ
Գասպար Տէր-Ղազարեան
Լօռու գործակալութեան կողմից
43. Յովհաննէս Թումանեանց
Անձնափոխանորդ
Սարգիս Խանաղեանց
Սղնախի գործակալութեան կողմից
44. Բժ. Տիգրան Մելքոնեան Թադէոսեանց
Անձնափոխանորդ
Գասպար Գ. Եարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասից «Русск. Вѣд.» լրագիրը տեղեկութիւններ է ստացել, որ Գանձակի նախկին նահանգապետը, որ ցանկանում էր ազգաբնակութեան վրա ազդել խաղաղ միջոցներով, յետ է կանչված։ Նրա փոխարէն նշանակված է պատժիչ զօրախմբերի հրամանատար գեներալ Գօլօշչապօվը»։ Պրովօկացիան մեկնում է իր թևերը։ Միթէ պէտք է անուանել այն, խաղաղ միջոցներով, երբ ռմբակոծվում հրի ճարակ էին դարձվում հայ գիւղերը, երբ թուրքերի թալանին միանում էր զօրքերը, երբ հայ կանանց բռնաբարութիւնները, գերազանցում էին տաճկական ասկերների վայրագութիւններից, երբ արքունական ճանապարհների վրա մորթվում էին տասնեակներով անմեղ ճանապարհորդներ, և այդ բոլորը տեղի ունեցաւ մեր աչքի առաջ։

Կիրակի, մայիսի 28-ին, կայացաւ Մողնու եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովի շարունակութիւնը։ Ներկայ էին մօտ 20 ծխականներ։ Ժողովը քննեց և աւարտեց այն հարցերը, որոնք մտցրած էին նախորդ ժողովի օրակարգի մէջ։ Հաստատվեց երեցփոխ պ. Աւետիք Արասխանեանցի ներկայացրած հաշիւները 1904 և 1905 տարիների համար. քննվեց և հաստատվեց այս 1906 թ. եկեղեցու, ինչպէս և հոգաբարձութեան նախահաշիւը 1906 թուի համար։ Հոգաբարձութիւնը զեկուցեց Գայիանեան օրիորդական դպրոցին պատկանող 25,000 րուբլի դրամագլխի ամբողջ պատմութիւնը, որից երեւաց, որ հոգևոր իշխանութիւնը ի դէմս թեմական առաջնորդի և հոգևոր բարձր վարչութեան որոշել է գումարը չը յանձնել հոգաբարձութեան, այլ պահել Թիֆլիսի կոնսիստորիայում և միայն նրա տոկոսը յատկացնել սանուհիների պահպանութեան Գայիանեան դպրոցում, այն եւս ոչ հոգաբարձութեան, այլ այդ դպրոցի նախկին խնամակալութեան կամ վարչութեան ձեռքով։ Ընդհանուր ժողովը միանգամայն ապօրէն գտնելով հոգևոր իշխանութեան այդ կարգադրութիւնը, հաւանութիւն տալով հոգաբարձութեան բռնած ընթացքին, որոշեց բողոքել և բողոքը յանուն ծխական ժողովրդի ներկայացնել Վեհ. Կաթողիկոսին առանձին պատգամաւորութեան ձեռքով։ Քննվեց և Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան հարցը և որոշվեց յանձնել ժողովի նախագահին, որ Մողնու, Վանքի և Բեթղեհէմի եկեղեցիների երեցփոխների հետ միասին մի մանրամասն բողոքագիր պատրաստելով ուղարկեն Վեհ. Կաթողիկոսին և խնդրեն հրամայել կատարել հոգաբարձութեան օրինաւոր ընտրութիւնը։

Քութայիսի հոգևոր դպրոցի կառավարիչ Գրիկօվը եկեղեցուց դուրս ելնելու ժամանակ երեք գնդակով մահացու վիրաւորված է. մահափորձողը ազատ է։

«Баку» լրագիրը հաղորդում է, որ վերջին տասը օրերի ընթացքում Ելիզաւ-Գանձակի շրջանում երկաթուղու գծի մօտերում և հարեան շրջակայ գիւղերում սահմանապահ պահակները զինուորների աջակցութեամբ կարողացել են բռնել մինչև 50 հոգի աւազակներ, և խլել նրանցից մինչև 30 ձիաներ։

Մայիսի 28-ի գիշերը, 7 թաղամասում բերդաններով և ատրճանակներով զինված 7 չարագործներ ներս ընկնելով Երուանդ Մանդինեանի տան բակը, մտան Մանդինեանի բնակարանը և փող պահանջեցին։ Մանդինեանի որդի Սարգիսը բակոն դուրս նետվեց փողոց և սկսեց աղաղակել, որի ձայնին շտապեցին մօտիկ կանգնած ոստիկանները, որոնք մտնելով բնակարանը, կողոպտիչներին այնտեղ չը գտան։ Երբ ոստիկանները դէպի բակ շտապեցին, նրանց վրա չարագործները փախչելու ժամանակ սկսեցին կրակել. իսկ ոստիկանները իրանց հերթին պատասխանեցին փախչողների յետևից արձակելով, որով, երբ կողոպտիչները անյայտացան, բակում գտնվեց չարագործների մէկի սպանված դիակը։ Հրացանաձգութեան ժամանակ դէպքի տեղը եկաւ դրագունների զօրախումբը, որն անմիջապէս շրջապատեց Պրիբէկէվսկի փողոցը, որի ժամանակ Եփէնդիէվի տան միւս կողմը, Քուռ գետի ափին յաջողվեց բռնել երեք անձի, որոնց անուններն են, Սեդրակ Մօսէսօվ, Արկատի Բագրատօվ և Բալաբէկ Կազակեանց։ Բռնվածների մօտ զէնք չը գտնվեց.

Կիրակի, մայիսի 28-ին, նշանակված էր Թիֆլիսի վաճառականների ընդհանուր ժողով, որտեղ, ի միջի այլոց, պէտք է քննվէր վաճառականական ուսումնարանների (կօմմերչեսկի) նիւթական վիճակի ու Հաւլաբարի և «Մանթաշեան» Առևտրական ուսումնարանի շէնքի գրաւ դնելու մասին՝ ընթացիկ ծախքերը հատուցանելու համար։ Մեր վաճառականները իրանց սովորական անտարբերութեամբ չը հաւաքվեցին առաջին ժողովին և յետաձգվեց այն առաջիկայ կիրակի օրվայ։ Այդ ուսումնարանների նիւթական վիճակը միանգամայն աննախանձելի է։ Միթէ մեր առևտրական դասակարգը, որը 25 տարի շարունակ գիլդիական վկայաթղթերը վերցնելիս—որոշ գումար էր յատկացնում վաճառականական դպրոց բանալու համար և որը այժմ պսակված է վերջ ի վերջոյ յաջողութեամբ—թոյլ պէտք է տայ, որ կեանք ստացած և կանոնաւորված այդ օգտակար հաստատութիւնների գոյութիւնը պատահականութեան և վտանգի ենթարկվէ։

Նոր ստացած գրքեր. ստացանք հետևեալ 2 նոր գրքերը, հրատարակութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 1) № 2 «Թէ ինչպէ՞ս են կռւում գիւղացիներն իրանց կարիքների համար», գինն է 10 կոպ., 2) Ն. Վերների «Մեր հասարակութեան ներկան և ապագան», գինն է 10 կոպէկ։

Այսօր, մայիսի 30-ին, Արտիստական ընկերութեան համերգային դահլիճում կը կայանայ հայկական համերգ։ Ինչպէս ծրագրից երևում է երեկոյթը հայ հասարակութեան համար հետաքրքիր կը լինի։

Մայիսի 27-ին ցերեկվայ ժամը 5-ին Սիոնի փողոցում, Խօջափարուխեանի քարվանսարայում գտնվող Զամուխաձէի և Լազարեվի մանուֆակտուրնի խանութը մտաւ երկաթուղու ծառայողի գլխարկ ծածկած մի երիտասարդ տղայցի, ձեռքին ատրճանակ բռնած և մահվան սպառնալիքով փող պահանջեց։ Լազարեվը շփոթվեց, տուեց կասսայում եղած 80 րուբլին. կողոպտիչը դժգոհ էր և աւելի պահանջեց։ Լազարեվը գրպանից հանեց էլի 100 րուբլի և տուեց անյայտին, որը խանութից դուրս գալով նախազգուշացրեց Լազարեվին և խանութում գտնվող գործակատարներին, խանութից դուրս չը գալ, իսկ ինքը անյայտացաւ։

Մեզ հաղորդում են, որ Մետեխի բանտում բանտարկված Ախալցխայի բնակիչ Գէորգ Բանանեանցը, որը մեղադրվում էր Ազօվո-Դօնեան առևտրական բանկի կողոպտելուն իբր մասնակից, արձակված է բանտից, ինչպէս թիւրիմացութեամբ ձերբակալված և բանտարկված։ Բանանեանը բանտարկվեց մարտի 2-ին և արձակվեց բանտից մայիսի 27-ին. բանտում նա պահվում էր առանձին սենեակում։

Երէկ, մայիսի 29-ին, ցերեկվայ մօտ ժամը 11-ին, 3-րդ քաղաքամասում, Բազարնի փողոցի վրա Եակոբ Բրեգվաձէի մսի խանութի մօտ, ատրճանակի 2 հարուածով սպանվեց Բանկօվսկի ռեստօրանի տէր Նիկոլա Գեօրգիևվիչ Սախրալաձէն։ Նրա դիակը իր ազգականները տարան բնակարան։ Սպանողը անյայտացաւ, բայց ձերբակալվեցին մի քանի կասկածելի անձեր։

Թիֆլիսի անգործների մի խումբ դիմեց քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Չերքեզօվին, և խնդրեց դումայում քննել ապրուստի միջոց չունեցողների, կամ գործ փնտռողների համար մի ընկերութիւն հիմնելու հարցը։ Որովհետեւ ներկայումս այդ տեսակ մարդիկ շատ կան և անգործների հարցը քաղաքային լուրջ ուշադրութեան է արժանի, իշխ. Չերքեզօվ յանձնարարեց դումայի քարտուղար Ս. Զրելյովին մի քանի անդամների ներկայացուցիչների հետ միասին քննել ներկայ հարցը, և ներկայացնել իրան իրանց եզրակացութիւնները, արդեօք ինչ տեսակ ընկերական գործեր կարելի է հիմնել քաղաքում, ի նկատի առնելով նաև գործի ֆինանսական կողմը, Զրելյովին օգնելու համար նշանակված են քաղաքային վարչութեան ծառայողներ՝ Լ. Ա. Մամուլօվ, Ի. Փուրցելաձէ, տեխնիկներ՝ Կուրդիանի և Օհանջանեան և վարչութեան ագենտ Ռօխլին։

Մայիսի 21-ին երկաթուղային բանւորները միտինգ են ունեցել, որտեղ ընդունել են հետևեալ բանաձև. «Պետերբուրգի գծերի երկաթուղային բանւորներն ու ծառայողները, ընդունելով, որ աշխատաւոր ժողովրդի կարմիր դրօշակի վրա գրված պահանջների բաւարարութիւնը նրանք կարող են ստանալ միմիայն յեղափոխական կռւով, անհրաժեշտ են համարում որքան կարելի է շուտով կազմակերպվել և վերականգնել երկաթուղային միութիւնը, որպէսզի կարելի լինի հարկաւոր մօմենտում կառավարութեանը հարուած տալ և դրանով նորից պաշտպանել աշխատաւոր ժողովրդին իր մեծ կռւի մէջ հողի և ազատութեան համար»։ «Курьеръ»

Վիբորգում խուզարկութիւններ են կատարվել այնտեղ նոր ուղարկված բերդապահ թնդանօթաձիգ զօրքի մէջ։ 20 հոգուց աւելի զինուորներ են կալանաւորվել։ Քաղաքից դուրս Վօտօնինսկի անտառում քաղաքական նպատակով կայացած միտինգից յետոյ բազմաթիւ կալանաւորութիւններ են տեղի ունենում բերդապահ զինուորների մէջ։ «Страна»

Կուրսկից «Народн. Вѣст.»-ին հեռագրում են մայիսի 22-ից. 1) Այս րօպէիս բանտի մօտ զօրաբանակում Կուրսկի զօրքերի 3 գնդերը բազմամարդ միտինգ ունեն։ Մշակում են իրանց պահանջները։ Սպառնալիքները և խոստումները անզօր են։ Մի քանի հազարներից կազմված միտինգը շրջապատված է կօզակներով։ Փողոցներում բազմաթիւ զինուորներ են շրջում։ Տրամադրութիւնը վերին աստիճանի լարված է։ 2) Ֆատեժից պահանջել են մի հարիւրակ կօզակներ դրանց ճնշելու համար։ Միտինգում ծեծվել է գնդապետը։ Երեկոյեան նոր միտինգ է նշանակված։ Ագիտատորներին չեն յանձնում։ 20-ի գիշերը կօզակների զօրանոց մտան 10 ժանդարմներ, խուզարկեցին, բայց ոչինչ չը գտան։ Մեծ անբաւականութիւն կայ։

Ներքին գործերի մինիստրը մինիստրների խորհրդի մէջ առաջարկութիւն է յարուցել քաղաքային հասարակական վարչութիւնների և զեմսկի հաստատութիւնների ընտրութիւնները առ այժմ դադարեցնել մինչև որ հասարակական վարչութիւնների բարեփոխութիւնների հարցը կը լուծվի ընտրողական իրաւունքների ընդարձակման հիմունքներով։ Մօտ օրերս ներքին գործերի մինիստրութիւնը ներկայացնելու է Պետական Դումային քաղաքային և զեմսկի վարչութիւնների բարեփոխութիւնների նախագիծը։

«Слово»

Ագրարական անկարգութիւնների մասին ստացված վերջին լուրերը չափազանց անհանգստացուցիչ են։ Անկարելի է ցոյց տալ նահանգներ կամ գաւառներ, որոնք բռնկված չլինեն ագրարական անկարգութիւններով, դրանք ճշմարիտ է, աւելի շատ վիճաբանական, բնաւորութիւն են կրում։ Եթէ ամբողջ գարնան ամիսների ընթացքում ստացված տեղեկութիւնները գումարենք, կը տեսնենք, որ ագրարական շարժումների ամենից աւելի զօրեղ տեղերն են Սարատովի, Վորօնեժի և Պենզենսկի նահանգները։

«Дума»

Մօտ ժամանակներս քննվելու է 200 սօցիալիստ—յեղափոխականների յայտնի գործը։ Բացի դրանից սկսվելու է սօցիալ-դեմօկրատների հսկայական դատը։ Այդ գործի համար դատի ենթարկվողների թիւը դեռևս որոշված չէ, բայց խոշոր թիւ է հասնում «Д.»

Պետական Դումայի անդամ Ուլյանովը հրաման է ստացել չը հեռանալ Պետերբուրգից։ «Р. В.»

«Дума» թերթը հաղորդում է, որ «ոստիկանական միութիւնը» որի մասին այնքան շատ գրեցին ու խօսեցին իր ժամանակին, և որին այժմ մեծ խնամքով որոնում են մայրաքաղաքի ոստիկանական բարձր պաշտօնեաները, թղթի վրա միայն գոյութիւն ունի։ Իրաւ է այդ միութեան նախաձեռնողները գտնվել են, բայց ոստիկանութեան անհանգիստ մեծամասնութիւնը անկարելի համարեց յարել նրան։ Այդ մի քանի նախաձեռնողները, որի պարագլուխն է նախկին մի ոստիկան և որը իբրև պաշտօնազուրկ անելուց յետոյ սկսեց գործել ոստիկանութեան դէմ, իրանց միութիւն անուանեցին, զանազան տեսակ կոչեր ու բաց նամակներ էին գրում նոյն անունով, և դրանով մոլորեցնում էին թէ հասարակութեանը և թէ ոստիկանութեանը։ Բայց այժմ այդ բանը բացվեց և ոստիկանական իշխանութիւնը հանգստացաւ։ Պետերբուրգի ոստիկանութեան մէջ կրամոլա չը կայ, հասարակութիւնը ժամանակ է, որ այլ ևս հաւատ չընծայի այդ ոստիկանական միութեանը։ «Бирж. Вѣд»

«XX Вѣкъ»-ը տեղեկացել է, որ Վիտտէ հեռագրել է Պետերբուրգ, որ արտասահմանեան բանկային տները այլ ևս կրեդիտ չեն բաց թողնիլ, եթէ որ կոնֆլիկտ ծագի Դումայի և կառավարութեան մէջ։

Մօտ օրերս Պետերբուրգում Նևյայի մասի բանուորները մի դատարկ բնակարանի մէջ հրաւիրեցին, իբրև թէ հիւանդի մօտ, հռչակաւոր սև հարիւրակային գործիչ բժիշկ Դուբրօվինին և մահվան սպառնալիքով պահանջեցին, որ նա նամակ գրէ իր կնոջը իրանց յանձնելու այն գիրքը, որի մէջ գրված են սև հարիւրակի խմբի անդամները։ Այդ գրքի ղեկավարութեամբ բանուորները խլում են սև հարիւրակայիններից ատրճանակները և տուգանքի են ենթարկում յօգուտ անգործ ընկերների։ Այդ ցուցակում յիշված էին, ի մէջ այլոց, Նևյայի գործարանի վարպետ Սուխին և դիրեկտորը։ «XX Вѣкъ»

Պետերբուրգ են հասել Կովկասից նոր ընտրըված Պետական Դումայի առաջին պատգամաւորները։ Ինչպէս լսում ենք, Կովկասի ներկայացուցիչները պարլամենտական ֆրակցիայի մէջ են մտնելու հարցապնդումի առաջարկութեամբ կովկասեան ճնշումների մասին։

Մայիսի 27-ին ցերեկվայ ժամը 2-ին Օլգինսկի փողոցի վրա բնակվող Նադեժդա Դանցելլի բնակարանը մտան 3 զինված երիտասարդներ, պահանջեցին նրանից դրամարկղի բանալին և, արկղը վերցնելով 400 րուբլի փող, անյայտացան։

Մայիսի 20-ին նիստ ունեցաւ սանիտարական մասնաժողովը, որին մասնակցում էին Պետական Դումայի մօտաւորապէս 10 բժիշկ անդամները։ Այդ մասնաժողովը ստացաւ կարգադրիչ մասնաժողովից բժշկական օգնութիւն մատակարարելու և սանիտարական մասը բարելաւելու կազմակերպութիւնը Տաւրիկեան պալատի մէջ Պետական Դումային յատկացրած բնակարաններում։ Մասնաժողովը նախագահ ընտրեց զեմստվայի բժշկական մասի յայտնի գործիչ, Կուրսկի զեմստվոյի սանիտարական բիւրոյի կառավարիչ պատգամաւոր Վ. Ի. Դոլժենկովին։ Մասնաժողովը յայտարարութիւն էր ստացել բժիշկներ Ելպատիեվսկուց, Լօրիս-Մելիքովից և Պօնչարովից, որով նրանք իրանց պատրաստակամութիւնն էին յայտնում ձրի հերթապահութիւն անել Պետական Դումայի նիստերի բոլոր ժամանակը հարկաւոր դէպքերում բժշկական օգնութիւն հասցնելու համար։ Մասնաժողովը բաժանեց նրանց մէջ հերթապահութեան ժամանակները։

«Бирж. Вѣд.»

Օրէնբուրգից «Дума»-ին հեռագրում են. երկու հազար հոգուց բաղկացած բազմութիւնը խաղաղ կերպով մօտեցաւ բանտին խնդրելու կալանաւորներին վերջ տալու արդէն մի քանի օր շարունակվող ուժասպառ քաղցին։ Ամբոխը ոչ մի ցոյց չարեց և կարգապահութիւնը ոչ մի բանով չը խանգարվեց։ Պահակատեղում կանգնած օֆիցերը, առանց նախազգուշացնելու հրամայեց մօտիկից անցկացնող կօզակներին «կրակելու» իսկոյն որոտաց համազարկը, եղան երկու սպանվածներ, ու տասը հոգի ծանր վիրաւորվածներ։ Ամբոխը սարսափահար սկսեց փախչել իրար ոտնատակ տալով։ Կային դրանց թւում կանայք և երեխաներ։ Վնասվողների թիւը ճիշտ յայտնի չէ, բայց կարծում են, որ պէտք է չափազանց շատ շատ լինի։ Հասարակական կարծիքը սաստիկ գրգռված է։ Հեռագիր ուղարկվեց Պետական Դումայի անդամ Միխայլիչենկոյի անունով, բայց, տեղական ադմինիստրացիայի կարգադրութեամբ, պօստա-հեռագրական գրասենեակը հրաժարվեց ընդունել հեռագիրը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԹԻՒՐՔ ԿԱՆԱՆՑ ՄԷՋ

Լօնդօնից հաղորդում են «Journal» թերթին, որ Պօլսից ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ արիստոկրատական հարեմներում կատարեալ յեղափոխական պրօպագանդա է մղվում։ Մուսուլման կանայք պահանջում են ոչնչացնել հարեմները և վերադարձնել իրանց մարդկային արժանապատուութեան համար ստորացուցիչ բանտարկված կեանքը։ Սարսափելի ընտանեկան դրամաներ են կատարվում։ Թրքուհիները ահագին քանակութեամբ, չը նայելով օրէնքի խիստ հալածողութեան, փախուստ են տալիս դէպի արտասահման։ Ներքին գործերի մինիստրի 18 և 16 տարեկան երկու աղջիկները Ֆրանսիա փախչելուց յետոյ, արտասահման են անցել երեսունից աւելի տիկիններ ու օրիորդներ Թուրքական ամենաբարձր շրջաններից։ Դրանք այն բաղդաւորներն են, որոնք, կեանքը վտանգի ենթարկելով, յաջողութեամբ թողին անցան Թուրքական սահմանը։ Բայց շատերը, պակաս բաղդաւորներից (որոնց թիւը յայտնի է միայն Բօսֆօրի խոր յատակին) մահմեդական օրէնքի հիմունքներին դաւաճանելու համար խիստ պատիժ կրեցին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՒՐՔԻԱ

Ամերիկայի եւ Թիւրքիայի յարաբերութիւնները. «Իրշադում» կարդում ենք հետևեալ զուարճալի տողերը. «Ներկայումս Ամերիկայի Միացեալ-Նահանգները մտածում են իրանց Կ. Պօլսի ներկայացուցչութիւնը բարձրացնել դեսպանութեան։ Այդ հարցի լուծումը այնքան հեշտ չէր և այդ նրա համար, որ Թիւրք կառավարութեան Միացեալ-Նահանգների մօտ ունեցած դեսպանը ահա չորս տարի է չէ կարողանում իր յանձնարարագիրը ներկայացնել նախագահ Ռուզվելտին։ Դրա պատճառն էլ այն է, որ այդ յանձնարարագիրը ուղղված է չորս տարի առաջ Մակ-Կինլիի անուան։ Այդ ժամանակից ի վեր ոչ ոք չէ կարողանում համարձակվել Սուլթան Համիդին իմացնել Մակ-Կինլիի մահը, որովհետև երբ սուլթանը լսում է վեհապետներից մէկի սպանութեան լուրը՝ մտքումը զանազան վախեր և չփոխութիւններ առաջ են գալիս!? Որքան որ մահից մենք էլ ենք վախենում, բայց այդ աստիճան—ոչ!»

Մաքսային հարցը.—Սուլթանը բաւական ժամանակ է աշխատում է Եւրոպայի համաձայնութիւնը ձեռք բերել՝ ներմուծված եւրոպական ապրանքների վրա մաքսի քանակը բարձրացնելու երեք տոկոսով։ Գանձարանը այնպիսի դրութեան մէջ է, որ հասոյթի այդ աղբիւրը անհրաժեշտ է։ Մաքսի բարձրացման դէմ էին առանձնապէս Անգլիան և Ռուսաստանը։ Երևի այժմ բոլորն էլ համաձայն են այդ զիջումն անելու, բայց այն պայմանով, որ գոյացած արդիւնքը գործ դրվի Մակեդոնիայի կացութիւնը բարւոքելու նպատակով։ Սուլթանը մտմտուքի մէջ է ընկել։ Հօ այդ պայմանով չէ, որ նա խնդրել էր այդ շնորհը։ Եթէ իր անյատակ քսակը չը պէտք է մտնէ այդ փողը, թող կրողը տանէ մաքսի բարձրացումն էլ ու Մակեդոնիան էլ։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Նիստը բացվում է 11 ժամ 45 րոպէին։ Նախագահում է իշխան Դոլգորուկովը։

Տօկարսկին առաջարկում է հերթական հարցերի վիճաբանութիւնները յետաձգել մինչև երեկոյեան նիստը և անմիջապէս անցնել ագրար հարցի քննութեան։

Նախագահը բացատրում է, որ պէտք է քննվեն մինիստրներին հարցապնդում անելու առիթով ներկայացրած 32 յայտարարութիւնները, ոչ թէ 11-ը, ինչպէս յայտնվեց երէկ։

Տօկարսկու առաջարկութիւնը քուէարկվում է։ Վերջ ի վերջոյ Դուման վճռում է անցնել ագրար հարցի քննութեան։

Նախագահը կարդում է միքանիսի առաջարկը՝ դադարեցնել այդ հարցի առիթով խօսելու ցանկացող հռետորների ցուցակագրելը և իւրաքանչիւր հռետորին տալ 5 րոպէ խօսելու համար։ Բացի դրանից նախագահը յայտարարում է, որ գրված են 129 հռետորներ։

Ժիլկինը ընդդիմախօսութիւնից և Օբոլենսկու ուղղումից յետոյ Դուման հռետորների ցուցակագրելու հարցը սպառված է համարում և մերժում է խօսելու ժամանակը կրճատելու առաջարկը։

Դրանից յետոյ սկսվում են վիճաբանութիւնները։

Ագրարային հարցի վերաբերմամբ մի ընդարձակ ճառ է արտասանում Անիկինը—աշխատաւոր խմբակի ներկայացուցիչը, նա մատնացոյց է անում գիւղացիների մեծ կարիքների, և այն սխալ հայեացքների վրա, որ իբր գիւղացիները կողմնակից են մասնաւոր սեփականութեան, և ասում է, որ գիւղացիները կամենում են սոսկ հողերից օգտվել, ուրիշ ոչինչ։

Վերջում հռետորը դիմում է ռուս ժողովրդին, ասելով. «Դու ժողովուրդ, ուղարկեցիր մեզ հող և ազատութիւն ձեռք բերելու համար. մենք յայտնեցինք, որ հողերի ստիպողաբար գրաւումը անհրաժեշտ է. բայց մեզ ասացին, որ այդ բանը անթոյլատրելի է։ Այն ժամանակ մենք պատասխանեցինք մինիստրներին «բարի ճանապարհ, գնացէք Աստուծով»...։

Իշխան Դոլգորուկովը աշխատում է կանգնեցնել հռետորին, բայց դահլիճը թնդում է բուռն և խլացուցիչ ծափահարութիւններով։

Ապա խօսում է Ջաբօլօցկին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Ջաբօլօցկին քննադատում է 42 անդամների գրութիւնը, առաջարկում է հաստատել մանր սեփականատէրերի ինստիտուտ, որ հռետորի կարծիքով, միջոց կը տայ աշխատաւոր ազգաբնակութեան աշխատել։

Սէօսօբէինը ընդդիմախօսում է ագրարային օրինագծի դէմ, որը, հռետորի կարծիքով ոչնչացնում է մասնաւոր սեփականութիւնը։ Հարաւային նահանգների գիւղացիները հեծում են, ձգտում են մշտապէս հող ձեռք բերել, այսինքն լիակատար սեփականութիւն դարձնել, ուստի և օրինագիծը նրանց բաւարարութիւն չի տայ։ Նախագահը զեկուցանում է, որ մի քանի անդամներ խնդրում են նիստ գումարել և երեկոյեան Դուման միաձայն մերժում է այդ առաջարկը և որոշում է փակել այսօրվայ նիստը երեկոյեան 7 ժամին և վաղը նիստ չը կայացնել։ Ապա ժամը 2 և 5 րոպէին մի ժամով ընդմիջում է յայտարարվում։

Այսօր, ագրարային հարցի առիթով վերջինը խօսեց Կօտլեարևսկին, որից յետոյ նախագահը զեկուցում է 32 հարցապնդումների մասին։ Վինավէրի առաջարկութեամբ ընդունվում է հետևեալ կարգը. «Եթէ այդ հարցապնդումները ստիպողական չեն, յանձնել 33-րդ մասնաժողովին, իսկ եթէ ստիպողական են, առաջարկել Դումային քննել, որով այդ հարցապնդումների վերջնական խմբագրութիւնը յանձնել պրեզիդիումին, առաջին երեք ստորագրողների մասնակցութեամբ, ապա հարցապնդումների մի մասը տրվում է մասնաժողովին, իսկ մի քանիսները անմիջապէս մինիստրներին։ 19-րդ մասնաժողովը խնդրում է նակազի քննութիւնը յետաձգել»։

Նախագահը առաջարկում է քուէարկել ագրարային հարցի վիճաբանութիւնները շարունակելու հարցը, որովհետև շատերը պահանջում են նիստը յետաձգել երկուշաբթիվան։

Քուէարկվում է նիստը փակելու առաջարկը։ Դուման ընդունում է։ Նիստը փակվում է 6 ժ. 50 ր.։ Հետևեալ նիստը կը կայանայ մայիսի 29-ին առաւօտեան ժամը 11-ին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 մայիսի

ՕՍՏԱՇԿՕՎ, 26 մայիսի։ Գաւառի ազգաբնակութիւնը կառավարութիւնից ստացել է 40,000 րուբլու փոխատուութիւն ցանքսի համար։ Գիւղացիներին հաց է բաժանվում։ Ըստ երևոյթին բերքը լաւ է։

ԼՕՆԴՕՆ, 26 մայիսի։ Տօկիօյից հաղորդում են, որ Ֆուշունի քարածուխի հանքերը կանցնեն Մանջուրիայում ճապօնական երկաթուղիները շահագործող ընկերութեան ձեռքը։ Ընկերութեան դրամագլուխը կազմելու է 15 միլ. ֆունտ, որի կէսը տալու է կառավարութիւնը, իսկ միւս կէսը ստորագրութեամբ կը ժողովվի Չինաստանում և Ճապօնիայում։ Ենթադրում են, որ միջոցներ կը գտնվեն օտարազգի կապիտալիստներին այդ ձեռնարկութեան հակվեցնելու համար։

ՓԱՐԻԶ, 26 մայիսի։ Կոմս Վիտտէն Փարիզի վրայով մեկնեց Էկսլէբէն, ուր կանչված էր իր փեսայի հօր—Նարիշկինի մահվան պատճառով։

ԿԻԵՎ, 26 մայիսի։ Զինուորական դատարանը արդարացրեց 1905 թ. փետրվարի 18-ի ապստամբութեան մասնակցած Պիլկէվիչ, Զեբէզյանով և Կօչերգին օֆիցերներին։—Դատաստանական պալատը քննելով «Свобода» և «Прав.» թերթերի նախկին խմբագիր-հրատարակիչներ պր. Լուչիցկու և գիմնազիայի վերատեսուչ Նաումենկոյի գործերը, որ մեղադրվում էին քրէական պատժագրքի 129 յօդուածով,—արդարացրեց նրանց այդ յօդուածի վերաբերմամբ, բայց մեղաւոր ճանաչեց փետրվարի 24-ի մամուլի ժամանակաւոր կանոնները խախտելու մէջ, և դատապարտեց իւրաքանչիւրին 300-ական րուբլու տուգանքի։ Խմբագիրները բողոքագիր են ներկայացնել։

ՓԱՐԻԶ, 26 մայիսի։ Պալատի Նախագահ—վերջնականապէս ձայների մեծամասնութեամբ 382-ով ընդդէմ 46-ի ընտրվեց Բրիսօնը։

ԲՕԳՕՏՈՒԽՕՎ, 26 մայիսի։ Կէնիգի Կլինովսկի կալուածքում գիւղացիները թոյլ չէին տալիս ցանկութիւն յայտնողներին աշխատել։ Ուղարկված ստրաժնիկները և զօրագունդը կրակ բացին առաջինների վրա և մահացու վիրաւորեցին երկու գիւղացու։ Գիւղացիները իրանց կողմից քարերով վիրաւորեցին հարկահանին և մի ստրաժնիկի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի։ Ազնուականների համագումարը վերջացրեց ագրար հարցի քննութիւնը, որին վերաբերվեց ոչ այնքան դասային շահերի տեսակէտից, որքան պետական շահերով առաջնորդվելով, իբր գլխաւոր ուշադրութիւնը նուիրելով գիւղացիների կարիքներին բաւարարելու հարցին. գտաւ, որ անհրաժեշտ է գիւղացու տնտեսական և արտադրող ոյժերը բարձրացնել։ Այդ ուղղութեամբ ղեկավարվելով, համագումարը եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է գիւղացիներին հնարաւորութիւն տալ—ազատօրէն դուրս գալ համայնքներից և նադելին հողերը լիակատար սեփականութիւն դարձնել։ Բացի դրանից համագումարը գտաւ, որ պետութիւնը և ազնուականութիւնը ամենալայն աջակցութիւն ցոյց պէտք է տան սակաւ հողագիւղացիներին հող տալու գործում, նաև իրաւունք և միջոց տալ գիւղացիներին տեղափոխվելու պետական ազատ հողաբաժինները՝ բնակվելու համար, այդ նպատակով ընդարձակել և լայնացնել գիւղացիական բանկի գործունէութիւնը, նաև գործադրել մնացած այն միջոցները, որոնցով կարելի է բարձրացնել գիւղացիական տնտեսութիւնը և արտադրող ոյժերը մեծացնել։ Բայց և այնպէս, ազնուականների համագումարը մասնաւոր սեփականութեան հողերի ստիպողաբար գրաւումը անընդունելի համարեց, որը, նրա կարծիքով, երկիրը ոչ թէ կը խաղաղցնէ, այլ ընդհակառակն, խռովութիւններ կը սերմանէ և կը երերէ սեփականութեան մնացած տեսակները, և տնտեսապէս կը փչացնէ հէնց իրանց գիւղացիներին։

ՄՕՍԿՎԱ, 26 մայիսի։ Տպարանական գործի բանուորների շարժումը սուր կերպարանք է ստանում։ Գործադուլ են արել շատ տպարանների տպող բանուորները և գրաշարները։ Տպարանատէրերը վճռել են գործադուլին գործադուլով պատասխանել. նրանք իրանց տպարանները անորոշ ժամանակով փակել են։

28 մայիսի

ՊՕԼՏԱՎԱ, 26 մայիսի։ «Наканунѣ» շաբաթաթերթի խմբագիր պ. Զելինսկան պատասխանատուութեան է ենթարկվում քր. պատժ. 129-րդ յօդուածով, սօցիալ-դեմօկրատական համագումարի որոշումները տպագրելու համար։

ԲԵՐԼԻՆ, 27 մայիսի։ Լրագիրները մեծ զգուշութեամբ են քննադատում իտալական թագաւորի պատասխանը, գտնելով որ եռեքպետեան դաշնակցութիւնը կորցրել է իր նախկին նշանակութիւնը, որ Իտալիայի դաշնակցութիւնը ընդհանրապէս անորոշ կերպարանք է ընդունել։ «Համբ. Նախր.» թերթը նոյնիսկ գտնում է, որ Իտալիայի եռեքպետեան դաշնակցութիւնից հեռանալը սոսկ ժամանակի հարց է, որ իտալական թագաւորի պատասխանը վկայում է, որ Իտալիան հրաժարվում է դաշնակցութիւնից։

ՍԱՐԱՏՕՎ, 27 մայիսի։ Նահանգի կառավարիչը մի կոչ է ուղղել ազգաբնակութեան, որի մէջ յիշատակում է Դումայի բանւոր պատգամաւորների դէպի բանուորները ուղղած կոչը։ Ադմինիստրացիան՝ պատգամաւորների այդ կոչին նայում է որպէս ապստամբութեան դրդիչ միջոցի վրա, և սպառնում է անկարգութիւնները զսպել ամենավճռական միջոցներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Այսօր, «Двадцатый Вѣкъ» և «Наша Жизнь» լրագիրներում լոյս տեսած լուրն այն մասին, որ իբր ֆինանսների մինիստրութիւնը կոմս Վիտտէից ստացել է մի հեռագիր, որի մէջ կոմսը յայտնում է օտարազգի բանկիրների մտադրութիւնը՝ ռուսաց 5%-այն փոխառութեան յետագայ անիրականացման վերաբերմամբ,—միանգամայն մտացածին է։ Ոչ մի հեռագիր ֆինանսների մինիստրութիւնը կոմս Վիտտէից չէ ստացել։ Իսկ մի քանի լրագիրների միւս լուրը, որ իբր կառավարութիւնը մտադիր է կրկին արտաքին փոխառութիւն կնքել—անհիմն է։ «Двадцатый Вѣкъ»-ում այսօրվայ «Въ поискахъ золотаго руна» յօդուածը՝ որի մէջ ասված է թէ կոմս Վիտտէն ուղարկվել է արտասահման նոր փոխառութիւն կնքելու միսսիայով—նախկին մինիստր Դուրնովօի աջակցութեամբ,—ցաւագար մտքի ծնունդ պէտք է համարել։

ԼՕՆԴՕՆ, 27 մայիսի։ Ռէյտերը հաղորդում է բրիտանական էսկադրայի կրօնշտադ այցելութեան ծրագրի մանրամասնութիւնները։ Նրա ասելով, այդ ծրագիրը կը հրատարակվի մօտ օրերս։ Այցելութիւնը տեղի կունենայ ծովային ռազմափորձերից անմիջապէս յետոյ։

ԲԱԹՈՒՄ, 27։ «Առևտրի և նաւագնացութեան» ընկերութեան գրասենեակից գողացված փողերը 11,500 րուբլի են եղել։ Կողոպտիչներն ազատ են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 27 մայիսի։ Պաշտօնական։ Վիէննայի «Политическая Корреспонденція»-ում երևաց մի հեռագիր Պետերբուրգից խփված, թէ Գորեմիկինի մինիստրութիւնը հրաժարական է տալիս և որն արդէն վճռված բան է։ Այսօրվայ երեկոյեան «Бирж. Вѣд.» յաւելուածում համարի հէնց առաջին երեսում շատ խոշոր տառերով տպված է. «Երէկ երեկոյեան Գորեմիկինի մինիստրութիւնը հրաժարական տուեց. առ այժմ պատասխանը անյայտ է»։ Հաղորդվում է, որ թէ Վիէննայի լրագրի հեռագրական լուրը, թէ «Бирж. Вѣд.»-ի տեղեկութիւնը պատկանում են սենսացիոն լուրերի թւին։ Գորեմիկինի մինիստրութեան հրաժարականի մասին կառավարչական շրջաններում խօսք անգամ չէ եղել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Դումայի նախագահ Մուրոմցեվը, որ վերջերս տանջվում էր մալարիայով՝ առողջացաւ։ Նրա հրաժարականի լուրերը անհիմն են։ Մայիսի 27-ին ժողովրդական ազատութեան կուսակցութեան Դումայի ֆրակցիան որոշեց Դումա մտցնել տեղական ինքնավարութիւնների համար իր կազմած օրինագիծը։ Այդ օրինագծի մշակումը յանձնված է մի առանձին մասնաժողովի, որին մօտիկ մասնակցութիւն ունեն Պետրունկէվիչը և Կօկօշկինը։

ՌԻԳԱ, 27 մայիսի։ Տեղական զինուորական դատարանը վերջացրեց Ռիգայի ռազմիկ խմբի գործը։ Մեղադրվողներից խմբի առաջնորդ պրօվիզօր Ռուբէնշտէյնը, որին իրան Նապօլէոն է կոչելիս եղել, նրա օգնական Զախարօվը և 5 հոգի դատապարտվել են մահվան պատժի(?). 9-ը արդարացվել են. մնացածները դատապարտվել են 3—15 տարվայ աքսորի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Պետերբուրգի բանւոր պատգամաւորների խորհրդի գործադիր կոմիտէտի գործի մեղադրական արձանագրութիւնը վերջացած է։ 299 հոգուց պատասխանատուութեան են ենթարկվում միայն 53-ը։ Նրանք մեղադրվում են քրէական պատժագրքի 2-րդ մասի 100 և 101-րդ յօդուածների հիման վրա։ Գործադիր կոմիտէտի գլխաւոր դատարանը ճանաչել է 5 հոգու։ Կը մեղադրէ քննիչի օգնական Բալցը։ Գործը կը քննվի յունիսի 17-ից 20-ը հրապարակօրէն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Ստատս-սէկրէտար Սաբուրօվը նշանակված է Պետական խորհրդի առաջին վարչութեան նախագահ 1905 թ.։

29 մայիսի

ՄՕՆՏԷԼԻՕՆԷ, 28 մայիսի։ Այստեղ, գիշերվայ ժամը 2-ին ուժեղ երկրաշարժ զգացվեց։ Բնակիչները փախան շրջակայ գիւղերը։ Մարդկային զոհեր չը կան։

ՄԱԴՐԻԴ, 28 մայիսի։ Թագաւորը հաստատեց նոր մինիստրութեան կազմը հետևեալ կերպով. մինիստր-նախագահ նշանակված է Մօրէտ, ներքին գործերի մինիստր՝ Կիրօգա Բալիտէրօս, արտաքին գործերի Ալմօդօվար, ֆինանսների՝ Ամօս Սալվատոր, զինուորական՝ Լիւկ, ծովային—ծովապետ Կօնկաս, ժողովրդական լուսաւորութեան՝ Սանմարտին, արդարադատութեան՝ Սեչէ Բիւէլօ, առևտրի՝ Գասէտ։

ՀՌՕՄ, 28 մայիսի։ Առաւօտեան վաղ, Պեցցօ, Վերեկա, Մէսին և Ժիօ-Կալաբրի քաղաքներում երկրաշարժ զգացվեց։

ՌՕՄՆԻ, 28 մայիսի։ Գրաւված է «Живое Слово»-ի յաւելուածը, որի մէջ տպված է Դումայի 14 բանւոր պատգամաւորների կոչը։

ՎԱՐՇԱՎԱ, 28 մայիսի։ Երէկ զինուորական դատարանը կախաղանի միջոցով մահվան է դատապարտել 4 հոգու, որոնք զինված յարձակում են գործել գիւղի գանձարանի վրա։

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ, 28 մայիսի։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն Եւպատորիայում խոշոր անկարգութիւններ են. անգործները այրում են ջրաղացները, կործանում են մեխանիքական գործարանը։ Քաղաքից մեկնեց փոխ-նահանգապետը. ուղարկված են զօրքեր և ստրաժնիկներ։

ԵՒՊԱՏՕՐԻԱ, 18 մայիսի։ Երէկ երեկոյեան անգործների ամբոխը յարձակվեց Դուվանի շոգէ ջրաղացի վրա և սկսեց ալիւրը գողանալ։ Ոստիկանութիւնը չը կարողացաւ դիմադրել։ Վերջում ջրաղացը ամբոխը այրեց։ Զօրքին տեսնելուն պէս, ամբոխը ցրվեց։ Վնասները հասնում են 100,000-ի։

ՍԻԶՐԱՆ, 28 մայիսի։ Անանինօ գիւղում ագրարային անկարգութիւններ են ծագել։ Ստրաժնիկները ծեծել են մի քանի գիւղացիների։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 28 մայիսի։ Պրօֆէսիօնալ (արհեստակցական) դաշնակցութիւնների գործունէութիւնը ընդլայնվում է։ Դնեպրօվսկի գործարանի բանուորները կազմել են այդպիսի դաշնակցութիւն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Դուկիս, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՋԻԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՈԿ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½-3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ե. Գ. ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար սենեակ։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 160—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԷԳԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 32—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերսկսեց ընդունել հիւանդներին Պեատիգորսկում մայիսի 1-ից։ Пятигорскъ, Верхній бульваръ № 14, д. Кн. Гирей.
(ե.հ.կ) 15—20

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչևա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 28—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Լ. Յ. ԲԵՐԲԵՐԵԱՆԸ
Նախկին տարիների նման ընդունում է հիւանդներին Եսսենտուկում և Կիսլօվօդսկում։
(ե. հ. շ.) 1—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Դուկիս, Սեմէօնովսկի փողոց № 16։
(ու. կ. ե.) 10—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Այս ամառ ևս, նախկին տարիների նման, կընդունի հիւանդներ Կովկասեան հանքային ջրերում։ Հասցէն՝ Эссентуки, Верхняя Курсовая, дача Введенской.
(ե. հ. կ.) 7—10

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պօդեզդ նոտար Միքրովի։ (ե.հ.շ.) 13—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ.պ. անդամների, կանդիդատների և ժամանակաւոր յաճախորդների, որ մայիսի 30-ից ժողովարանի ամառային շէնքում, երեքշաբթի և շաբաթ օրերը, մասնակցութեամբ զինուորական երաժշտների խմբի և սազանդարների կը կայանան ընտանեկան երեկոյթներ։ Հիւրերը կը թողնվեն ընդհանուր կանոնների համաձայն, վճարելով 1 րուբլի։
(ե. շ.) 1—2

Լոյս տեսաւ
ՄԱՐԳԱՐ
„ՀՈԳԵՎԱՐՔԻ ԾԻԾԱՂԸ“
Պատմուածք Բագուի սարսափներից
Գինն է 10 կոպէկ
Դիմել հայ գրավաճառներին կամ հրատարակչին. հեղինակի հասցէն. Баку, Армянск. женск. шк. Гимназическ. ул. учителю Маргару Аветисянъ.
(ե. հ. շ.) 1—5

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10% — յատկացրված է հայ արկածեալների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկևիչի փողոց, № 13։
(հ. կ. ե.) 19—28

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Յարութինով
(հ. կ. ե.) 16—100

Խնդրում եմ բարերարներին մի չնչին գումարով օգնել օգնել ինձ, ուսմանս վարձը վճարել, հակառակ դէպքում ուսումնարանի վարչութիւնը արգելում է ինձ յաճախել ուսումնարան։
2—2 Աշակերտ Ա. Դ.

ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ
Մի հայ օրիորդ, որը գիտէ նաև հայերէն, ցանկանում է դասեր ունենալ. համաձայն է գնալ ամառանոց։ Հասցէն՝ Тамаринская ул. № 38. д. Исаханова. 2—2

Մի պարոն որ ծանօթ է Պարսկաստանի բոլոր քաղաքների վաճառականութեան, ցանկանում է ունենալ կառավարչի կամ հաշուապահութեան պաշտօն։ Հասցէն՝ Ելիզավետինսկայա № 58. Թումանեանցի մագազինում։ (շ.կ.հ.) 3—3

ԱՃՈՒՐԴ
Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը այս տարվայ մայիսի 31-ին, չորեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 8-ին, դպրոցի խորհրդարանում նշանակել է աճուրդ կապալով տալու Բուսկայա և Վանքի մեծ փողոցների վրա գտնված երկյարկանի շինութեան կառուցումը։ Շինութեան յատակագիծը, նախահաշիւը և պայմանագիրը կարելի է տեսնել դպրոցի խորհրդարանում ամենայն օր, բացի տօներից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։
(կ. ե.) 2—2

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ
Մեծ հայ շաբաթաթերթ, հրատարակվում է Ամերիկայի Բօստօն քաղաքում։
Բաժանորդագինն է տարեկան՝ Միացեալ-Նահանգների համար 2 դոլլար, Ռուսաստանի և այլ երկիրների համար 12 ֆրանկ։ Հասցէն՝ Arménian Publisching Co, P. O. Box, 1731 Boston, Mass. 2—3

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը նշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կր հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. [illegible] № 5